Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 15 (515) սեպտեմբեր 17-30, 2022թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Վրեժով տոգորված՝ դեպի նոր հաղթանակներ

Արցախում երկու տարի առաջ բռնկվեց պատերազմ: Այդ պահից յուրաքանչյուր հայի թե՛ առօրյայում եւ թե՛ հոգեկերտվածքում ինչ-որ բան փոխվեց: Պարտությունը իր հետ բերեց տարածքային կորուստները եւ անտանելի դարձրեց մարդկային կորուստների ցավը: Պատերազմից հետո սահմանված բոլոր թույլատրելիներն ու անթույլատրելիները իրար խառնվեցին: Առաջին պահին չհասկացանք, չըմբռնեցինք կատարվածը. 21-րդ դարում ոչ ոք չէր հավատում, որ կարելի է խեղել մարմիններ, բարբարոսաբար ավերել մշակութային-կրոնական արժեք ունեցող կոթողներ: Իսկ «քաղաքակիրթ» աշխարհը լռեց:

Ամբողջատիրական նկրտումներ ունեցող պետությունները լռեցին, քանի որ նավթն ու հարստությունը գերադասվեցին մարդկային արժեքներին: Կեղծ արդարության ջատագովները իրենց լռությամբ համաձայնության կանաչ լույս վառեցին բարբարոսությունների համար:

Երկու տարի առաջ սկսված այս իրողությունը շարունակվում է մինչեւ այժմ: Սեպտեմբերի 13-ին Ջերմուկի, Վարդենիսի եւ Սյունիքի հարակից շրջաններում կրկնվեցին թշնամու ոճրագործությունները: Այս բոլորը պարտավորեցնում է մեզ իրականությունը տեսնել առանց գունավորման ու պճնանքի, առանց խաբկանք առաջացնող արդուզարդի՝ իրականությունն իր ամբողջ մերկությամբ:

Միգուցե բոլոր պատերազմներում էլ նույն պատկերները կրկնվում են, միգուցե պատերազմների կորուստները մարդկության զանազան խավերի համար նույնական են, սակայն մեկ բան բնորոշ էր մեր հաղթանակին՝ դա մեր ասպետականությունն էր, որից փաստորեն զուրկ է թշնամին: «Թուրքը մնում է թուրք» թեւավոր խոսքի իրավացիությունը մեր օրերում եւս փաստվեց:

Անցել է երկու տարի, ապացուցվել է, որ ՀՀ արտաքին աղետաբեր քաղաքականությունը՝ «խաղաղության դարաշրջան» վարագույրով շղարշված, այլ բան չէ, քան պարտությունների շարանը երկարեցնող մղձավանջ:

Մղձավանջը, անկումներն ու պարտությունները շարունակական են լինելու, քանի դեռ չենք սթափվել եւ համաժողովրդական մակարդակով չենք թեւակոխել պայքարի եւ դիմադրության փուլ: Իսկ դրա համար նախեւառաջ համախմբում եւ ապա՝ ինքնակազմակերպում է պետք:

Այդ ինքնակազմակերպման առանցքը ինչպես 1988թ., այս անգամ էլ պետք է դառնա Արցախը: Բնական է, որ պատերազմից՝ 44-օրյա աղետից հետո յուրաքանչյուր արցախցու համար հիմնական մտահոգությունը գոյատեւումն է: Սակայն, այլեւս ժամանակն է, որ գոյապահպանման համար վատնվող ներուժը ուղղվի դեպի վերակազմակերպման, պետականության խարխլված հիմքերի ամրապնդում եւ վերընձյուղում: Թող այդ ներուժի սնուցման աղբյուրը դառնա յուրաքանչյուր հայորդու սրտում բոցկլտացող վրեժը: Կորցրածին վերատիրանալու, նոր հաղթանակներ կերտելու եւ հայրենիքում ապրելու վեհ եւ համամարդկային իրավունքները ազգային հարատեւման եւ առաջադիմության միակ երաշխիքներն են. այլընտրանք չունենք:

Խաչերթ՝ ի հիշատակ Արցախյան երրորդ պատերազմում նահատակված հերոսների

Սեպտեմբերի 27-ին Արցախյան 44-օրյա պատերազմի 2-րդ տարելիցի կապակցությամբ Ստեփանակերտում հազարավոր քաղաքացիների մասնակցությամբ տեղի է ունեցել Խաչերթ՝ ի հիշատակ Արցախյան երրորդ պատերազմում նահատակված հերոսների:

Խաչերթը մեկնարկել է Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու բակից, որտեղ իր խոսքն է ասել Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի փոխառաջնորդ Տեր Սահակ վարդապետ Շաքարյանը:

Ժամը 11:00-ին մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգել են զոհվածների հիշատակն ու այնուհետեւ «Տղերքը ո՛ղջ են», «Միությո՛ւն, պայքա՛ր, հաղթանա՛կ» եւ այլ կոչերով շարունակել երթը դեպի Ստեփանակերտի Եղբայրական հուշահամալիր:

Երթին մասնակցում էին նաեւ ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը, ԱՀ նախկին նախագահ Բակո Սահակյանը, ԱՀ Պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԱՀ Աժ պատգամավորները, ԱՀ կառավարության անդամներն ու հոգեւոր այրերը:

Երթի ընթացքում մասնակիցները ձեռքերով պահում էին 44-օրյա պատերազմում նահատակված հերոսների լուսանկարները:

Երթի ավարտին Ստեփանակերտի Եղբայրական հուշահամալիրում Արցախի թեմի փոխառաջնորդ Տեր Սահակ վարդապետ Շաքարյանի ձեռամբ տեղի ունեցավ Արցախյան 44-օրյա պատերազմին նվիրված «Լուսո խորան»-ի օրհնության կարգն ու 44-օրյա պատերազմում նահատակված հերոսների հոգեհանգստյան կարգը:

Ստորեւ ներկայացնում ենք սեպտեմբերի 27-ին «Լուսո խորան»-ի մոտ հնչեցրած ելույթները.

Մեզանից յուրաքանչյուրից է կախված Արցախում արժանավայել ապրելու իրավունք վաստակելը.
Ա. Ասրյան

«Հարգարժան հոգեւոր եւ պետական այրեր, սիրելի հայրենակիցներ, օրվա խորհրդի մասին խոսելն ահավոր ծանր էգ վերքերը չափազանց թարմ են, կորուստները՝ անչափելի: Յուրաքանչյուր կորուստ մի ամբողջ աշխարհ է, շատերը՝ մեզ համար դեռեւս չբացահայտված: 44 օրվա ընթացքում մենք մի ողջ սերնդի սերուցք ենք կորցրել: Գուցե ոմանք ապագայում մեծ զորավարներ կդառնային, ոմանք՝ աշխարհահռչակ գիտնականներ, ոմանք՝... ավա՜ղ, այսօր արդեն բոլորն էլ զինվորներ են, երկնքում՝ մեր հոգեղեն զորքի շարքերում: Երկրի վրա հերոսների հավաքատեղին Ստեփանակերտում Եղբայրական պանթեոնն է, Երեւանում՝ Եռաբլուրը: Այստեղ են մեր քարեղեն զորքի շարքերը ցավալիորեն խտացել: Այստեղ ամեն կորուստ դեմք ու անուն ունի, բայց նաեւ բոլորին միավորող ընդհանրություն կա, եւ դա միայն ցավը չէ, ոչ էլ հպարտությունը:

Այսօր հպարտ լինելու իրավունք ունեն միայն նրանք՝ մեր հերոսները: Ողջ մնացածներիս միավորողը՝ պարտքի զգացումն է, տղաների անձնազոհությանը արժանի լինելու պատասխանատվությունը: Ի վերջո, վերջում այնտեղ նաեւ նրանց ենք պատասխան տալու մեր արածների ու չարածների մասինե,-այս խոսքերով է սկսվել Ստեփանակերտի եղբայրական հուշահամալիրում Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված միջոցառումը:

Արցախյան 3-րդ պատերազմում զոհված եւ անհետ կորած զինծառայողների հարազատների միության նախագահ Արմեն Ասրյանը, ով 44-օրյա պատերազմում իր որդուն է կորցրել, հանդես է եկել ելույթի խոսքով.

«Հարգելի՛ հայրենակիցներ,

Այսօր լրացավ ադրբեջանաթուրքական տանդեմի կողմից սանձազերծված պատերազմի 2-րդ տարելիցը, ինչն Արցախը բաժանեց 2 ժամանակաշրջանի՝ մինչեւ պատերազմը եւ պատերազմից հետո:

Արցախը եւ, ընդհանրապես, հայ ազգը ծանր հարվածներ ընդունեց իր վրա, հազարավոր հայորդիներ նահատակվեցին՝ հանուն Արցախի գոյության, հանուն հայ ժողովրդի գոյության:

Այս օրը մենք չպետք է համարենք սգո օր: Այս օրը մենք պետք է համարենք հանուն մեր նահատակված հերոսամարտիկների համախմբման ու վերարժեւորման օր: Տղաները կենաց-մահու կռիվ են տվել հանուն մեկ գաղափարի՝ Ազատ Արցախ ունենալու:

90-ականներին հազարավոր հայորդիների կյանքի գնով կերտել ենք հաղթանակ, սակայն, ցավոք սրտի, չենք կարողացել ճիշտ օգտագործել հաղթանակի պտուղները, եւ ունեցանք 2020 թվական:

Ներկայիս բարդ ու ռազմաքաղաքական ծանր իրավիճակում Արցախի եւ ընդհանրապես հայ ժողովրդի լինել-չլինելու հարցի առաջ ենք կանգնած: Հիմա մեզնից յուրաքանչյուրից է կախված Արցախում արժանավայել ապրելու իրավունք վաստակելը:

→ 5

Արցախում էլեկտրաէներգիայի եւ գազի սակագների նվազեցման ուղղությամբ ընդդիմության նախաձեռնությունը

Ուժը կորցրած են ճանաչվել Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծախսերի որոշ մասի սուբսիդավորման կարգում կատարված փոփոխությունները, եւ մինչեւ 2023թ. ապրիլի 1-ը կգործի սուբսիդավորման նախկին կարգը: Այս մասին հայտնի է դարձել սեպտեմբերի 29-ին՝ ԱՀ Ազգային ժողովի հերթական նիստի ժամանակ, երբ ընդդիմադիր երեք խմբակցությունների նախաձեռնությամբ էլեկտրաէներգիայի եւ գազի սուբսիդավորման հետ կապված որոշման նախագիծ է ներկայացվել: Նախ՝ ԱՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը հայտարարել է, որ կառավարության նոր որոշմամբ մինչեւ ապրիլի մեկը նախկին սակագներն են գործելու:

Նա նշել է, որ Ստեփանակերտի հավաքների ժամանակ էլ է բարձրացվել հարցը, եւ սլաքներ են ուղղվել Ազգային ժողովի վրա, իբր ԱԺ-ն է սակագները բարձրացրել:

Պատգամավոր Դավիթ Գալստյանը մտահոգություն է հայտնել, թե կառավարությունը խուսափում է նման որոշումներն Ազգային ժողովի հետ քննարկելուց, եւ կոչ արեց կառավարությանը՝ հետայսու ականջալուր լինել ԱԺ կարծիքին:

Կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ ԱՀ ՏԿԵ նախարար Հայկ Խանումյանը նշել է, որ որոշումը փոխվել է ԱԺ ջանքերով: «Այդ մոտեցումը ես կտրականապես սխալ եմ համարում: Կարծում եմ, որ մենք պետք է հրաժարվենք սուբսիդիաներից: Եթե ունենք բնակչության անապահով խավ, ուրեմն պետք է համապատասխան նպաստ վճարվի: Էներգետիկ համակարգը չպետք է սոցիալական ֆունկցիա կատարի»,- կարծում է Հ. Խանումյանը:

Հակադարձելով՝ Արթուր Թովմասյանը նշել է, որ ցանկացած պատերազմից հետո, անկախ նրանից՝ հաղթող կողմ ես, թե պարտվող, 3-5 տարի պետք է գործեն սոցիալական ծրագրեր:

Ընդդիմադիր խմբակցությունների առաջարկով Ազգային ժողովը միաձայն որոշում է ընդունել գազի սակագնի սուբսիդավորման առաջարկի մասին.

«Ղեկավարվելով ԱԺ կանոնակարգ օրենքի 89-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Ազգային ժողովը որոշում է. «հիմք ընդունելով ԱՀ նախագահի հանրային խոսքն՝ առ այն, որ Արցախը կարող ենք պահել այն բնակեցնելով, որի նախադրյալները պետք է լինեն ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելը բնակիչների համար, ինչպես նաեւ պատերազմից հետո Ազգային ժողովում ընդունված այն օրենքները, որոնք մեղմել են հարկային բեռը եւ բազմաթիվ որոշումներ, որոնց արդյունքում որոշ չափով թեթեւացել է բնակիչների սոցիալական բեռը, առաջարկում ենք ԱՀ կառավարությանը քննարկել եւ ըստ հնարավորության նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար, փետրվար եւ մարտ ամիսների համար մասնակի չափով սուբսիդավորել գազի սակագինը»»:

Եթե ԱՀ պաշտոնյաները չեն կիսում Լեւոն Տեր-Պետրոսյանի տեսակետը, ինչո՞ւ են հանդիպում նրա հետ

ԱՀ նախագահի, ԱԳ նախարարի կողմից հայտարարվել է, որ հակամարտությունը լուծված չէ, այն պետք է

լուծվի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի անվերապահ ճանաչման հիմքով, մենք ձգտում ենք անկախության միջազգային ճանաչման: Այս մասին սեպտեմբերի 29-ին կայացած ԱՀ Ազգային ժողովի նիստի ժամանակ ասել է ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը՝ պատասխանելով ԱՀ ԱԺ «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանի հարցին:

Պատգամավորը տարակուսանք է հայտնել, որ ԱՀ բարձրաստիճան պաշտոնյաները պարբերաբար հանդիպումներ են ունենում ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա համարող, Արցախը որպես բեռ ներկայացնող առաջին նախագահի հետ, ով իր կարծիքն Արցախյան շարժման տարիներից ի վեր չի փոխել: «Եթե ԱՀ կառավարությունը, նախագահը չեն կիսում այդ տեսակետը, ինչո՞ւ են հանդիպում Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, իսկ մնացածների հետ՝ ոչ: Դրան հակառակ, «Դիմադրության» շարժումն ամեն ինչ անում է հանուն հայկական Արցախի, հանուն նրա, որ ոչ հայանպաստ փաստաթուղթ չստորագրվի»,- նշել է Արթուր Մոսիյանը:

Արտակ Բեգլարյանը նշել է, որ ինքը մի անգամ է հանդիպել Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, մյուսների հետ էլ հանդիպումներ լինում են ե՛ւ նախագահի, ե՛ւ ԱԳՆ-ի, ե՛ւ իր կողմից: «Արցախը եւ ընդհանրապես հայ ժողովուրդը պետք է շարունակի պայքարը, որպեսզի մեր ինքնիշխանությունը, մեր հավաքական եւ անհատական իրավունքները ամբողջությամբ պաշտպանված ու ապահովված լինեն, այդ թվում՝ Արցախի ժողովրդի՝ սեփական հայրենիքում սեփական ճակատագիրը կերտելու իրավունքը»,- ավելացրել է ԱՀ պետական նախարարը:

Գազի մատակարարման վերաբերյալ տարբեր մոտեցումներ կան. Հայկ Խանումյան

ԱՀ Ազգային ժողովի նիստի ժամանակ ԱՀ ԱԺ ՀՅԴ խմբակցության պատգամավոր Վահրամ Բալայանը բարձրացրել է Արցախը ՀՀ-ին կապող միջանցքով ինտերնետ կապի, էլետրաէներգիայի, գազի անխափան մատակարարման հարցը:

Ի պատասխան՝ ԱՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Հայկ Խանումյանը նշել է, որ ինտերնետային կապն արդեն անցկացված է: «Գազի մատակարարման լուծման վերաբերյալ տարբեր մոտեցումներ կան: Էլեկտրագծերի հետ կապված եւս դժվարանում եմ ասել: Համենայնդեպս, ձմռանը լույս չունենալու խնդիր չկա, որովհետեւ էլեկտրական էներգիա ստանում ենք նաեւ տեղական արտադրանքով»:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Արցախի պատվիրակությունն ԱՄՆ-ում է

Սեպտեմբերի 15-ից մեկնարկել է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի եւ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանի աշխատանքային այցը Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

«Ապառաժ»-ի հետ զրույցում Լեռնիկ Հովհաննիսյանը նշեց, որ իրենց պատվիրակությունը ԱՄՆ-ում է ՀՅԴ Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակի հրավերով, որտեղ հանդիպումներ են կազմակերպվում ոչ միայն տեղի հայ համայնքի, այլ նաեւ ԱՄՆ Կոնգրեսում, Ներկայացուցիչների պալատում եւ Սենատում: «Հանդիպել ենք այստեղ գործող հիմնական դերակատար կազմակերպությունների՝ այսինքն ՀՅԴ Հայ դատի գրասենյակի, Ամերիկայի հայկական համագումարի հետ, եղել են հանդիպումներ տարբեր ձեւաչափերով: Ասեմ նաեւ, որ Սենատում եւ Ներկայացուցիչների պալատում կայացած հանդիպումներում մեզ ուղեկցել են ՀՅԴ Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակի մեր ընկերներն ու ընկերուհիները,-նշել է Լ. Հովհաննիսյանը: Նրա խոսքով՝ Դ. Բաբայանը ներկայացնում է Արցախյան հիմնահարցը, ադրբեջանական կողմի վերջին գործողությունները եւ այն ակնկալիքները, որոնք մենք ունենք ԱՄՆ-ից՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ: «ԱՄՆ-ն պետք է համապատասխան գործունեություն ծավալի՝ զսպելու Ադրբեջանի եւ Թուրքիայի նկրտումները»,- ասել է Լ. Հովհաննիսյանը:

Ըստ նրա՝ բոլոր հանդիպումները անցնում են շատ ջերմ միջավայրում: Հանդիպումներ են ունեցել Վաշինգտոնում գործող 2 հայկական եկեղեցիներում, այցելել են կիրակնօրյա դպրոցներ, որտեղ բավականին ջերմ ընդունելության են արժանացել: Խոսելով տեղի Հյդ կառույցի աշխատանքների մասին, Լ. Հովհաննիսյանը նշեց, որ կառույցը բավականին ակտիվ գործունեությունն է ծավալում, հատկապես ՀՅԴ Հայ դատի գրասենյակը, որը լուրջ աշխատանք է կատարում Արցախի հանրապետության շահերը պաշտպանելու ուղղությամբ:

Սեպտեմբերի 16-ին պատվիրակությունը Վաշինգտոնում այցելել է Հայաստանի Հանրապետության դեսպանատուն, հանդիպել ԱՄՆ-ում ՀՀ դեսպանատան աշխատակիցների հետ:

Քննարկվել են տարածաշրջանային զարգացումներին, ԱՄՆ-ում Արցախի շահերի պաշտպանությանը եւ հայոց եռամիասնության ամրապնդմանը վերաբերող հարցեր:

Նույն օրը Արցախի պատվիրակությունը հանդիպում է ունեցել Ամերիկայի հայկական համագումարի ղեկավար կազմի հետ՝ գործադիր տնօրեն Բրայան Արդունիի գլխավորությամբ: Քննարկվել է հայրենիք-Սփյուռք կապերին, տարածաշրջանային վերջին զարգացումներին առնչվող թեմաների լայն շրջանակ:

Նախարարը բարձր է գնահատել Ամերիկայի հայկական համագումարի դերն Արցախի զարգացման ու Արցախի ժողովրդի շահերի առաջմղման գործում:

Հանդիպումներին մասնակցել է ԱՄՆ-ում ու Կանադայում ԱՀ Մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը:

Նույն օրը պատվիրակությունը Վաշինգտոնում հանդիպում է ունեցել նաեւ ԱՄՆ Արեւելյան շրջանի Հայ դատի հանձնախմբի ղեկավար կազմի հետ՝ կազմակերպության գործադիր տնօրեն Արամ Համբարյանի գլխավորությամբ: Սեպտեմբերի 17-ին կայացել է նախարարի հանդիպում-քննարկումը ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի՝ դաշնային քաղաքականության վերաբերյալ սեմինարի մասնակիցների հետ: Նույն օրը Վուդրո Վիլսոնի տուն-թանգարանում տեղի է ունեցել Արցախի անվտանգությանն ու ազատությանը նվիրված միջոցառում, որի ընթացքում նախարարը հանդես է եկել ելույթով: Ներկաները մտքեր են փոխանակել Արցախի Հանրապետությունում տիրող իրավիճակին, արտաքին քաղաքականությանը, տարածաշրջանային գործընթացներին եւ ներհայկական կապերին վերաբերող թեմաների շուրջ:

Նախարարը կարեւորել է Հայ դատի դերակատարությունը Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդման, համազգային խնդիրների լուծման, Արցախին մշտապես սատարելու գործում:

Արցախի պատվիրակությունը ԱՄՆ Կոնգրեսում հանդիպել է նաեւ ԱՄՆ մի խումբ կոնգրեսականների, սենատորների եւ օրենսդիր թեւի ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են Արցախի արտաքին քաղաքականությանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը, երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր:

Նախարար Բաբայանը երախտագիտություն է հայտնել ջերմ ընդունելության համար եւ նշել, որ ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի հետ սերտ հարաբերությունները շարունակական եւ արդյունավետ կլինեն նաեւ ապագայում:

Սեպտեմբերի 23-ին Արցախի պատվիրակությունը Լոս Անջելեսում հանդիպել է ԱՄՆ-ում «Հայաստան» հիմնադրամի նախագահ Մարիա Մեհրանյանի եւ կառույցի խորհրդի պատասխանատուների հետ: Հանդիպմանը անդրադարձել է Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանը, տարածաշրջանում տիրող իրավիճակին վերաբերող հարցերին:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանը եւ ԱՄՆ-ում ու Կանադայում ԱՀ Մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը:

Արցախի պատվիրակության ԱՄՆ-ում ունեցած հանդիպումների եւ քննարկումների արդյունքների մասին «Ապառաժ»-ը առաջիկայում կգրուցի ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանի հետ:

Արցախի պատվիրակության հանդիպումները դեռեւս շարունակվում են:

Արցախի պատգամավորները՝ ՀՀ իշխանությունների հետ հանդիպումների մասին

Սեպտեմբերի 20-ին ԱՀ ԱԺ խմբակցությունների ղեկավարները մամլո ասուլիս են հրավիրել, որի ընթացքում ներկայացրել են սեպտեմբերի 15-17-ը Երեւան կատարած այցի արդյունքները:

Արցախի խորհրդարանականները հանդիպումներ են ունեցել ՀՀ ԱԺ նախագահի, խորհրդարանական 3 քաղաքական ուժերի հետ: Քննարկվել են Հայաստանի ու Արցախի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի, աշխարհաքաղաքական զարգացումների, ՀՀ վարչապետի վերջին հայտարարության հետ կապված հարցեր:

ԱՀ ԱԺ քաղաքական ուժերին հավաստիացրել են, որ օրակարգում չկա որեւէ փաստաթուղթ, որը կարող է վնաս բերել Արցախին ու Հայաստանին:

Հանդիպումներից մանրամասներ ներկայացնելուց հետո պատգամավորները պատասխանել են լրագրողների հարցերին: Դրանք վերաբերում էին Հայաստանի խորհրդարանի հետ համագործակցությանը, տարբեր հարցերի շուրջ քաղաքական ուժերի դիրքորոշմանը, Արցախի անվտանգությանը:

Խորհրդարանականները շեշտել են, որ միասնական են Արցախի ինքնորոշման իրավունքի իրացման, անվտանգային հարցերում: Նրանք կարեւորել են համերաշխության մթնոլորտի ձեւավորումը, երկրի փրկության շուրջ բոլոր կարող ուժերի միավորման անհրաժեշտությունը:

ՀՀ իշխանությունները կամ դավադիր ծրագիր են իրականացնում, կամ ապիկար ու ապաշնորհ են. Արթուր Մոսիյան

ԱՀ Ազգային ժողովի «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանի խոսքով՝ այցը մինչ այդ էին պլանավորել, բայց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ սեպտեմբերի 14-ին ՀՀ Ազգային ժողովում արված հայտարարությունները պատճառ դարձան, որ ավելի շուտ ուղեւորվեն: «Այդ հայտարարության յուրօրինակ բացատրությունը գալիս է նրանից, որ ժողովուրդը միանգամից ընդվզեց, եւ տասնյակ հազարավոր մարդիկ Ստեփանակերտում եւ Երեւանում դուրս եկան բողոքելու: Սա տեղեկատվական դիվերսիա էր ժողովրդի զգոնությունը ստուգելու համար: Ի տարբերություն հայաստանյան իշխանությունների որոշ ներկայացուցիչների՝ արցախցիների համար Ջերմուկը, Մարտակերտը, Ստեփանակերտը կամ Գյումրին հավասարապես հայրենիք են»,- ասել է պատգամավորը:

Նա նշել է, որ Արցախի հարցի, կարգավիճակի, Ադրբեջանի կազմում չլինելու հարցի շուրջ Արցախի խորհրդարանում միասնական տեսակետ է ձեւավորվել, եւ ԱՀ ԱԺ վերջին հայտարարությունները դրա վառ ապացույցն են: Խորհրդարանական խմբակցությունները համախմբվել են ոչ թե ինչ-որ մեկի շուրջ, այլ ընդհանուր խնդրի եւ դրա լուծման համար: Այս իմաստով խորհրդարանական բոլոր խմբակցությունները միասնական են, միակամ, որովհետեւ միայն այդպես է հնարավոր փրկել այն, ինչ մնացել է, ու առաջ շարժվել:

«Ցանկացած մարտահրավեր, հատկապես անվտանգային, որը կախված է ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Արցախի գլխին, կարելի է լուծել միայն միասնական ջանքերով: Այստեղ հարց է առաջանում, որ Նիկոլ Փաշինյանի դեմքով միասնականություն հնարավոր չէ: Վերջին երկու տարիները դրա մասին են խոսում»,- նշել է Ա. Մոսիյանը:

Անդրադառնալով ՀՀ իշխող խմբակցության հավաստիացումներին հավատալու մասին հարցին՝ ՀՅԴ խմբակցության ղեկավարը նշել է, որ ՀՀ իշխանություններին հավատալ-չհավատալը քաղաքական ճաշակի հարց չէ: «Հարցի մի կողմն է, թե ինչ են ասում, ու նաեւ՝ թե ինչ են անում: Որեւէ հավատ չի կարող լինել մի իշխանության նկատմամբ, որն ասում է՝ առանց Արցախի ժողովրդի չենք կարող նրա ճակատագիրը որոշել, ու նոյեմբերի 9-ին գաղտնի համաձայնագիր ստորագրում Հայաստանի եւ Արցախի ժողովրդի թիկունքում: Դրանից հետո երկու տարվա ընթացքում ՔՊ որեւէ բարձրաստիճան պաշտոնյա «Արցախի Հանրապետություն» անունը չի արտաբերել: Սրանք քաղաքական մեսիջներ են, որ կա՛մ դավադիր ծրագիր են իրականացնում, կա՛մ ապիկար ու ապաշնորհ են: Այստեղ ընդդիմության-իշխանության հարց չէ: Վերջին մեր հանդիպման ժամանակ ՔՊ գործընկերները փորձեցին ասել, թե սխալ ենք հասկացել վարչապետի ասածները, ես հակադարձեցի՝ ասելով՝ ինչպե՞ս է պատահում, որ հազարավոր մարդիկ, քաղաքական գործիչներ մի ձեւով են հասկանում, միայն ՔՊ-ն՝ ուրիշ ձեւով»:

Պատգամավորի խոսքով՝ պիտի ունենալ կարող իշխանություն ու բոլոր հարցերին միասնական լուծում տալ. «Մարտահրավերները բազմաթիվ են, միայն ընդդիմությունն էլ ի վիճակի չէ այս հարցերը լուծելու, ամբողջ ժողովրդով, քաղաքական դաշտով պետք է լուծել: Խնդիրն այն է, թե հիմնական պատասխանատուները ցանկության դեպքում արդյո՞ք ի վիճակի են լուծելու դրանք, չեմ կարծում: Ելքն այն է, որ ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Արցախում հայրենասիրական ուժերը միշտ զգոն լինեն»:

Եզրափակելով խոսքը՝ Արթուր Մոսիյանը նշել է, որ այսօր անվտանգային լուրջ խնդիր կա, եւ բոլորս

պետք է կենտրոնանանք դրա վրա, բոլոր տարաձայնությունները պետք է մի կողմ դրվեն: «Սա նաեւ իշխանություններից է կախված: Իմ հորդորն է իշխանություններին, որ իրենց գործելաոճը փոխեն, սոցիալական արդարություն հաստատեն եւ միասնականություն ապահովեն»,- նշել է նա:

Արցախի ժողովուրդն է որոշելու իր ապագան. Արթուր Հարությունյան

Այցի հիմնական նպատակն էր Հայաստանի եւ Արցախի շուրջ ստեղծված վերջին զարգացումները քննարկելը, առկա մարտահրավերները հաղթահարելը: Այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ նշել է «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության ղեկավար Արթուր Հարությունյանը: Արցախի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի, ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի, արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի, խորհրդարանում ներկայացված երեք խմբակցությունների ղեկավարների եւ պատգամավորների հետ:

«Վերջերս ՀՀ ԱԺ-ում վարչապետի հնչեցրած որոշ մտքերի առնչությամբ քննարկումներ են կայացել: Իշխանական թեւի ներկայացուցիչները մեզ վստահեցրել են, որ չի լինելու որեւէ փաստաթուղթ, որը կարող է վնասել Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների հետագա գոյությանը կամ ընդհանուր հայկական պետականությանը: Արձանագրվել է, որ Արցախի ժողովուրդն է որոշելու իր ապագան: Որոշումները կայացնելու է Արցախի ժողովուրդը Արցախի իշխանությունների հետ, եւ ՀՀ-ն այս առումով սատար է կանգնելու Արցախի ժողովրդի ցանկացած որոշմանը»,- իր խոսքում նշել է Ա. Հարությունյանը:

Խոսելով այդ հավաստիացումներին հավատալու մասին հարցին՝ Ա. Հարությունյանը նշել է, որ իր տպավորությամբ նրանց վստահեցումները տրամաբանական էին, եւ մնում է հետագա գործողություններով համոզվել դրանում:

Խմբակցության ղեկավարը կոչ է անում հանրությանը, ՀՀ մեր քույրերին եւ եղբայրներին՝ համախմբվել, որպեսզի մի բռունցք դառնալով դիմագրավենք այս լրջագույն մարտահրավերներին:

ՔՊ խմբակցության ներսում քաղաքական տարաձայնություններ կան. Դավիթ Գալստյան

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության հետ հանդիպման ժամանակ ասացին, որ խմբակցության նիստերում տարակարծիք են, իրենց ներսում քաղաքական տարաձայնություններ կան, նշել է Արցախի «Արդարություն» խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանը:

«Մեր կողմից ծանր խոսակցություն է եղել հենց այն առումով, որ ՔՊ պատգամավորները ժամանակ առ ժամանակ ամենաբարձր ամբիոնից հայտարարում են, թե Արցախը կարող է Ադրբեջանի հետ համակերպվել, ապրել, տեսնում են Արցախը Ադրբեջանի կազմում: Ցավոք սրտի, այդ մտքերը հնչեցնողները հանդիպմանը ներկա չէին, որպեսզի մենք ավելի կոնկրետ եւ առարկայական մեր հարցադրումներն անեինք: Եթե ՔՊ կուսակցության քաղաքական գիծը որոշում է մի անձ, որն Արցախում կանգնում եւ ասում էր՝ Արցախը Հայաստան է, եւ վերջ, ու այսօր խուսափում է Արցախ գալուց, Արցախը հայկական անվանելուց, ճիշտն ասած՝ նրանց ասածները «հալած յուղի» տեղ չենք կարող ընդունել, անհրաժեշտ է ամեն անգամ մեր կողմից նման հարցադրումներ, պնդումներ անել եւ ինչ-որ տեղ պարտադրել, որ չփորձեն Արցախի անունից որեւէ փաստաթուղթ ստորագրել»,- ասել է նա:

Ըստ Դավիթ Գալստյանի՝ ՔՊ-ում հասկացել են, որ Արցախը միայն Արցախի հարց չէ, հասկացել են, որ Արցախը տալով՝ Ադրբեջանի ախորժակը մեծանում է. հետո Սյունիքն են ուզելու, հետո մյուսները: «Միգուցե հասկանալով, որ ամբողջ ազգն է վտանգված, կգնան այնպիսի քայլերի, որ չվնասեն, հուսով ենք, բայց չենք կարող միանշանակ հավատալ»,- իր խոսքում նշել է պատգամավորը:

Արցախյան հարցը որեւէ քաղաքական ուժի մենաշնորհը չէ. Դավիթ Մելքումյան

Արցախյան հարցը որեւէ քաղաքական ուժի մենաշնորհը չէ, եւ որեւէ մեկը չի կարող որոշում կայացնել Արցախի ժողովրդի փոխարեն՝ սեպտեմբերի 20-ի ԱՀ ԱԺ խմբակցությունների հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է «Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցության պատգամավոր Դավիթ Մելքումյանը:

«Արցախում ապրող ժողովուրդը ինքն է իր ճակատագիրը որոշելու, եւ ինչպիսի որոշում կայացնենք, այդ օրակարգը պետք է առաջ տանենք: Որեւէ քաղաքական ուժ, դաշինք չի կարող այնպիսի դիմադրություն ցուցաբերել, ինչպես մենք: Հույսներս դնենք մեզ վրա, ինչպես արել ենք 90-ական թվականների Շարժման ժամանակ: Մենք պետք է պատրաստ լինենք ցանկացած զարգացման: Պարտավոր ենք վերանայել մեր բոլոր ծրագրերը, ապրելակերպը: Առաջին հերթին, կարեւորում եմ պաշտպանության բլոկին զուգահեռ՝ քաղաքացիական պաշտպանության բլոկը վերանայել եւ օր առաջ սկսել գործել»,- ասել է նա:

Խոսելով ընտրություններին կամ այլ քաղաքական գործընթացների մասնակցելու մասին՝ պատգամավորը նկատեց, որ հիմա պետք է փոխվեն առաջնահերթությունները: «Իմ կարծիքով՝ պետք է որոշում կայացնել՝ մենք զբաղվում ենք քաղաքականությա՞մբ, թե՞ երկիր ենք փրկում: Մենք ժամանակ կունենանք քաղաքականությամբ զբաղվելու, բայց առաջին հերթին պետք է փրկենք մեր երկիրը: Մենք պետք է ունենանք այն տարածքը, որտեղ կկազմակերպենք քաղաքական տարբեր միջոցառումներ: Պետք է օգտագործենք մեր բոլոր ռեսուրսները, առաջնայինը՝ մարդկային ռեսուրսները: Ունենք փորձառու գործիչներ, ովքեր ճանապարհ են անցել, հիմա ժամանակը չէ տարանջատելու, սեւերի եւ սպիտակների բաժանելու»,- նշել է Դավիթ Մելքումյանը՝ կարեւորելով ներքին միասնությունը:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Պատերազմում մեր բանակն ու ժողովուրդը չեն պարտվել

44-օրյա պատերազմ, հետեւանքներ, հետեւություններ, տեղեկատվական պատերազմ, անելիքներ: «Ապառաժ»-ի զրույցը Արցախի Պաշտպանության բանակի նախկին խոսնակ, գնդապետ Սենոր Հասրաթյանի հետ է.

- Պարո՛ն Հասրաթյան, 44-օրյա պատերազմից 2 տարի անց կարո՞ղ ենք հստակ արձանագրել մեր հիմնական բացթողումները:

- Այսօր անընդհատ փորձեր են արվում պատերազմում կրած խայտառակ պարտությունն «արդարացնել» նրանով, թե իբր մեր դեմ կռվել են ադրբեջանաթուրքական միացյալ ուժերն ու վարձկան գրոհայինների խմբավորումները՝ իրենց տրամադրության տակ ունենալով ամենաարդիական սպառազինությունն ու ռազմական տեխնիկան: Որ իրականում հակառակորդը մեր դեմ կռվում էր նշված ուժերով ու միջոցներով, դա իրոք այդպես էր, բայց, այդքանով հանդերձ, կցանկանայի հակադարձել վերոնշյալ «արդարացնողներին», իսկ ովքե՞ր եւ ի՞նչ միջոցներով էին կռվում մեր դեմ 1992-94-ին կամ 2016-ի ապրիլին: Ասեմ, որ ինչպես երրորդ, այնպես էլ 1-ին եւ 2-րդ պատերազմներում ե՛ւ թուրքական, ե՛ւ վարձկան գրոհայինների գործոնը միշտ էլ առկա է եղել արցախյան ճակատում:

Ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ պատերազմի ընթացքում լայնորեն կիրառվել են թուրքական արտադրության սպառազինությունն ու տեխնիկական միջոցները, 2016թ. ապրիլին առաջին անգամ կիրառվել են նաեւ իսրայելական անօդաչու թռչող սարքերն ու հակատանկային միջոցները, ռուսական արտադրության հեռահար ռեակտիվ հրթիռահրետանային կայանքները, տարատեսակ գրոհային ինքնաթիռներն ու ուղղաթիռները: Գրեթե տարբերություն չկար նաեւ վարձկանների ներգրավման մասով: Միայն 1-ին պատերազմի ընթացքում հակառակորդն օգտվել է հազարների հասնող աֆղանական մոջահեդների ու չեչեն գրոհայինների ծառայություններից, նրա օդաչուների մեծ մասը եղել են վարձկաններ, մասնավորապես՝ Ուկրաինայից...

Նույն պատկերն է եղել նաեւ 2016-ին, երբ մարտագծում հակառակորդի կողմից հիմնականում կռվում էին Թուքիայից եւ Սիրիայից բերված վարձկանների ջոկատներ... Իսկ թե ինչ եղավ 1-ին եւ 2-րդ պատերազմների արդյունքում, բոլորիս է հայտնի: Փաստն այն է, որ երկու դեպքում էլ հայկական կողմը կարողացավ հակառակորդին պարտադրել զինադադար եւ բանակցությունների սեղանի շուրջ լինել թելադրողի, այլ ոչ թե կամակատարի դերում, ինչպես այսօր ենք: Նախորդ երկու դեպքում մեզ հաջողվեց դա անել, քանի որ իրենց տեղում էին բանակի շարքայինից մինչեւ Գերագույն գլխավոր հրամանատար, որովհետեւ զինված ուժերի հրամանատարությունն ու երկրի քաղաքական ղեկավարությունն ունեին փոխհամաձայնեցված գործողությունների միասնական պլան, որովհետեւ ամենափոքր ստորաբաժանումից սկսած՝ մինչեւ պաշտպանական շրջանի եւ բանակի հրամանատարի մակարդակով հստակ գիտեին իրենց անելիքը, որովհետեւ, մանավանդ, 21-րդ դարի պատերազմում անթույլատրելի էր երկրի ղեկավարի մակարդակով խոսել 30 հոգանոց աշխարհազորային ջոկատներ կազմելու եւ չգիտես, թե ինչ նպատակով ռազմաճակատ մեկնելու մասին... Ոչ մեկին կարծես չի հետաքրքրում, թե ում հրամանով եւ ինչ նպատակով ռազմական գործողություններից մեկուսացրին պատերազմ անցած եւ մարտական հարուստ կենսափորձ ունեցող պահեստազորի գեներալներին ու իրենց ոլորտին լավագույնս տիրապետող բարձրաստիճան այլ սպաների...

Առայսօր անպատասխան է մնում նաեւ այն հարցը, թե ինչու Արցախի ղեկավարությունը հարկ չհամարեց հանդիպել պատերազմի հենց սկզբնական օրերին Ստեփանակերտում գտնվող Ռոբերտ Քոչարյանին ու Սերժ Սարգսյանին, ովքեր այդ օրերին կարող եւ պատրաստ էին իրենց փորձառությունն ու ռազմաքաղաքական կապերն օտագործել հանուն մեր երկրի պաշպանության... Լուրեր են տարածվում նաեւ այն մասին, թե՝ եթե անգամ երկրի ղեկավարությունը հնարավորություն չէր տալիս պաշտոնաթող գեներալներին մասնակցելու պաշտպանությանը, ապա նրանք պարտավոր էին ինքնուրույն շրջանցել այդ «արհեստական» խոչընդոտները եւ իրենց մասնակցությունը բերել մարտական գործողություններին: Նման անտեղյակներին կուզեի տեղեկացնել, որ հենց հիմնականում այդ ճանապարհով գեներալներ Լեւոն Մնացականյանը, Սամվել Կարապետյանն ու Արշավիր Ղարամյանը ներգրավվեցին մարտական գործողություններին: Տարբեր ժամանակահատվածներում գեներալներ Կարապետյանն ու Ղարամյանը համակարգում էինք Լաչինի միջանցքի, իսկ գեներալ Մնացականյանը՝ Ծոշ-Կարմիր շուկա բնագծի պաշտպանությունը... Եվ այսօր, եթե այդ երկու ուղղությունները գրեթե գտնվում են մեր վերահսկողության տակ, ապա դա արդեն ինչ-որ բանի մասին խոսում է... Կարելի է ավելի խորանալ, բայց ոչ այս ձեւաչափով... Միայն կասեմ, որ այս պատերազմում մեր բանակն ու ժողովուրդը չեն պարտվել, մեզ պարտության են տարել երկրի ու, առավել եւս, պատերազմի ղեկավարման հետ որեւէ կապ չունեցող իշխանությունները...

- Պատերազմի օրերին ակտիվ հրապարակումներ էիք անում ֆեյսբուքյան Ձեր էջում ու իրավիճակի սթափ գնահատականի հետ մեկտեղ, որը լավատեսական չէր, խոսում էիք բեկում մտցնելու հնարավորության մասին: Ի՞նչ կարելի էր անել իրավիճակը փոխելու համար, որ չարվեց:

- Ասեմ, որ պատերազմները սկսում եւ իրականացնում են ոչ թե բանակները, այլ պետությունները: Տվյալ դեպքում, բանակը ընթացքավորված պատերազմի կարեւոր գործիքակազմերից կարեւորագույնն է: Ինձ մոտ այն համոզմունքն է տիրում, որ մեր երկրների (ի նկատի ունեմ ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Արցախի) պետական ու ռազմադիվանագիտական կառույցները փոխանակ գործեին ստեղծված իրավիճակին համահունչ, ամեն ինչ թողել էին ինքնահոսի կամ, «լավագույն» դեպքում, բանակի հույսին: Այնինչ, ստեղծված իրադրությունը պահանջում էր ձեռնարկել ռազմադիվանագիտական կարեւորության այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են գործնական հարաբերությունների հստակեցումն ինչպես ռազմավարական դաշնակից պետությունների, այնպես էլ աշխարհաքաղաքական զարգացումներում առանցքային դերակատարություն ունեցող երկրների հետ:

Միաժամանակ, անհրաժեշտ էր օգտագործել ՀԱՊԿ-ի ազդեցությունն ինչպես դիվանագիտական խողովակներով, այնպես էլ հայտարարությունների տեսքով... Եվ, վերջապես, մենք ընդհանրապես կարծես մոռացել էինք աշխարհի երեք գերտերությունները ներկայացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության մասին... Սրանք լծակներ են, որոնք խելոք իշխանությունները պետք է օգտագործեին ինչպես պատերազմը կանխելու, այնպես էլ արդեն սկսված պատերազմի ընթացքի վրա ազդելու համար: Սակայն, ինչպես ասում են, եղավ այն, ինչ եղավ...

- 2020թ. օգոստոսին 25 տարվա զինվորական ծառայությունից հետո թողել եք Արցախի զինված ուժերի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պաշտոնը: Հաշվի առնելով պատերազմական օրերի տեղեկատվական քաոսը՝ կթողնեի՞ք այդ պաշտոնը, եթե իմանայիք, որ պատերազմը մոտ է: Արդյո՞ք այդ օրերին օգտագործվել է Ձեր փորձառությունը:

- Ցանկացած պետության հաջողություն, առավել եւս՝ եթե նա գտնվում է պատերազմական իրավիճակում, մեծապես պայմանավորված է նաեւ իր տեղեկատվական պատրաստությամբ: Արցախյան առաջին եւ ապրիլյան պատերազմների ընթացքում մենք իրականում ցույց տվինք, որ Պաշտպանության բանակն ունի կայացած տեղեկատվական համակարգ, իսկ ահա 44-օրյա պատերազմի մասով ձեռնպահ կմնամ որեւէ գնահատական տալ, մանավանդ, որ ես հնարավորություն չունեցա անելու այն, ինչ գտնում էի, որ ճիշտ է...

- Ի՞նչ եք կարծում, հայկական կողմը պատերազմի հետ կապված անհրաժեշտ հետեւություններն արե՞լ է:

- Եթե արած լիներ, ապա չեմ կարծում, որ այսօր մենք կլինեինք այսքան անօգնական վիճակում:

- Արցախյան վերջին պատերազմի ընթացքում եւ դրան հաջորդած ադրբեջանական սադրանքների ժամանակ ականատես ենք լինում ադրբեջանցի զինվորականների կողմից դեռեւս Արցախյան առաջին պատերազմի ժամանակ տարածված հայ զինվորի կերպարը ձեւափոխելու ջանքերի: Արդյո՞ք հայ զինվորի մարտական ոգին կոտրվել է:

- Հայոց բանակը եւ, մասնավորապես, նրա զինվորը արցախյան բոլոր պատերազմների ընթացքում իրեն դրսեւորել է հերոսական կողմերով: Պարզապես, «շնորհիվ» մեր այսօրվա իշխանությունների ապիկարության, թշնամու լեզուն երկարել է... Փոխեք առաջնորդին, եւ նա նորից դառնալու է առյուծ...

- Ի՞նչ պետք է անել՝ ռազմի դաշտում հաղթանակի հասնելու:

- Երկրի կառավարումն ու պաշտպանությունը վստահել նրանց, ովքեր տիրապետում են հաղթելու արվեստին...

Զրուցեց՝ Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ

Ոգեկոչելով նահատակների հիշատակը՝ ցույց ենք տալիս, որ մեր պայքարն ավարտված չէ

Պիտի գործենք եւ ոչինչ չպետք է խնայենք՝ մեր հայրենիքը օր առաջ ավելի պայծառ, ավելի հզոր ու ավելի շենացած տեսնելու համար: Այս մասին սեպտեմբերի 27-ին կազմակերպված խաչերթի ժամանակ նշել է ՀԱԵ Արցախի թեմի փոխառաջնորդ Տեր Սահակ վարդապետ Շաքարյանը:

Նրա խոսքով՝ այսօր նախկինից կրկնակի, եռակի, քառակի պիտի գործենք, 24 ժամ անընդհատ աշխատենք եւ երբեք չշտապենք, ոչ էլ ուշանանք: «Ինչպես Իսրայելի ժողովուրդը շտապեց եւ ոսկե հորթ ձուլեց, եւ պաշտեցին, միգուցե մենք էլ այսպիսի պաշտամունք ենք ունեցել, եւ Աստված պատժել է մեզ: Այս նշանով խոսել է մեր ազգի եւ մեր ժողովրդի հետ:

Մենք պիտի քաջություն ունենանք առերեսվելու, խոստովանելու մեր մեղքերը, նայելու մեր հոգուն, սրտին, փոխելու մեր կենցաղավարությունը, մեր մտածողությունը, հայրենիքի հանդեպ ունեցած մեր մտածումները, հայրենիքը օր առաջ ավելի պայծառ տեսնելու մեր պատրաստակամությունը, որպեսզի Աստված, տեսնելով այդ հոգեւոր դարձը, օգնության հասնի մեր ազգին. այլ ճանապարհ չունենք»,- իր խոսքում նշել է Արցախի թեմի փոխառաջնորդը:

Արցախի մշակութային ժառանգության հանրային խորհրդի նախագահ Սերգեյ Շահվերդյանը կարծում է, որ սեպտեմբերի 27-ի խորհուրդն առաջին հերթին պահանջատիրության ավելի ամուր հիմքերով երկրի ստեղծումն է ու հասարակության ամենալայն խավերի համախմբումը՝ հայրենիքը պաշտպանելու, մեր երեխաների համար ապագա ստեղծելու առումով, քանի որ մենք իրավունք չունենք մեր երեխաների փոխարեն որոշելու, թե որտեղ են նրանք ապրելու: Մենք պետք է ընդունելի պայմաններ ստեղծենք, որպեսզի երեխաներն իրենք որոշեն իրենց հետագա ճակատագիրը:

Անդրադառնալով համազգային համախմբման մասին հարցին՝ Սերգեյ Շահվերդյանը նշել է, որ հասարակությանը կազմակերպելը պետության բարձրագույն ֆունկցիան է. «Թե՛ պատերազմից առաջ, թե՛ հետո մինչեւ այսօր չենք տեսնում, որ պետական բարձրագույն իշխանությունը ընտրել է հասարակությանը համախմբելու ուղին: Ընդհակառակը, մենք ամեն քայլափոխի բախվում ենք հենց իշխանության կողմից հասարակությանը տարբեր ձեւերով պառակտելու քայլերին: Այդ պառակտումը սկսվում եւ ավարտվում է սոցիալական ծայրաստիճան անարդարություններով, որի հեղինակը եւ մեղավորը գործող իշխանությունն է»:

→ 5

Խաչերթ՝ ի հիշատակ Արցախյան երրորդ պատերազմում նահատակված հերոսների

1← Հետպատերազմյան ծանր իրավիճակում մենք սովորել ենք բողոքել, նվնվալ, որոշները՝ մի փոքր վտանգի դեպքում լքել Արցախը: Համաձայն եմ՝ անարդարություններ կան, մենք դեռեւս ինքնամաքրման խնդիր ունենք, սակայն մինչ այդ յուրաքանչյուր անձ թող իր խղճի առջեւ պատասխան տա. արդյո՞ք արել է այն հնարավոր նվազագույնը Արցախ աշխարհի համար:

Սիրելի երիտասարդներ, այսօր Ստեփանակերտի մի ծայրից մյուսը քայլել եք՝ ձեռքերում բարձր պահելով մեր հերոս տղաների նկարները: Դուք եք մեր

ապագան, եւ ձեր կրթությամբ, գիտելիքներով ու հայրենասիրությամբ պետք է ամրապնդեք մեր հայրենիքը:

Սիրելի՛ հայրենակիցներ, կոչ եմ անում բոլորիդ՝ հանուն բոլոր պատերազմներում անմահացած հերոսամարտիկների՝ համախմբվել, մի կողմ դնել քաղաքական տարաձայնությունները, հայացքները եւ օգտագործել յուրաքանչյուրիս պետականանպաստ պոտենցիալը՝ հանուն մեր հայրենիքի, հանուն Արցախի հզորացման: Դրանով մեր հարգանքի տուրքը մատուցած կլինենք մեր անմահացած հերոսամարտիկներին ու նրանց ընտանիքներին:

Եվ թող ադրբեջանաթուրքական տանդեմի պարագլուխներն իմանան, որ այստեղ գտնվում են մեր նախնիների գերեզմանները, արցախյան գոյապայքարի համար նահատակված հայորդիների շիրիմները, դարավոր մեր եկեղեցիներն ու պատմամշակութային բազմաթիվ կոթողներ:

Այստեղ է մեր տունն ու տեղը, եւ մենք ապրելու ենք այստեղ՝ Արցախ աշխարհում:

Կեցցե՛ Արցախը, փա՛ռք մեր հերոսամարտիկներին»,- ասել է Ա. Ասրյանը:

Արցախից է սկսվելու հայ ժողովրդի վերջնական ազատագրումը. Մ. Հաջյան

«Նորայրս աջ թեւս էր՝ հատվեց, Երվանդս ձախ թեւս էր՝ հատվեց, եւ արդ առանց թեւերի եմ մնացել»,- ասել է հերոս որդիների հայրը: Առանց թեւերի, բայց Արցախն ապրեցնելու վճռական կոչով է հանդես եկել Միքայել Հաջյանը՝ 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված միջոցառմանը:

«Սիրելի՛ Արցախցիներ, հարազատներս,

Այսօր, իրոք, ինչպես քիչ առաջ պարոն Ասրյանն ասաց՝ սգո օր չէ մեզ համար: Այսօր մեր զավակների համար հպարտության զգացման եւ մեր գաղափարների, մեր կենսակերպի վերարժեւորման օր է: Մեր պատկերացումներում, մեր աչքերի առաջ մշտապես հառնում են մեր զավակները:

Արցախյան պատերազմներում կորուսյալ, թե պատերազմից ողջ վերադարձած բոլոր տղաները, ովքեր թողնելով կենցաղ, սեր, ընտանիք, ի զեն են ելել՝ ի պաշտպանություն հող հայրենիի, եւ ովքեր հերոսաբար մարտնչելով կա՛մ նահատակվել են դիրքերում՝ թիզ անգամ չնահանջելով, կա՛մ վերադարձել են ողջ-առողջ տուն՝ իրենց ընտանիքները:

Արցախի ժողովրդի բազմադարյա պատմությունը լի է հերոսականության եւ ողբերգականության բազում էջերով: Ես ուզում եմ այսպիսի մի եզրահանգման գալ, այն է՝ յուրաքանչյուր ավագ սերունդ բեռ է թողել իր ժառանգների ուսերին: Իմ սերունդը եւս այդպես վարվեց, ցավոք: Իմ սերունդը չկարողացավ այդ բեռը թոթափել իր եւ ժողովրդի ուսերից, ու այն փոխանցեց ժառանգներին՝ զավակներին, ապա եւ թոռներին, հնարավոր է եւ ծոռներին:

Ցավում եմ եւ ներողություն եմ խնդրում մեր բոլոր տղաներից եւ մեր ժառանգներից, մեր գալիք ժառանգներից՝ նաեւ:

Մենք չպետք է մոռանանք նաեւ, որ մեր ուժը մեր համախմբման, մեր միասնականության մեջ է: Մենք չպետք է մոռանանք, որ աշխարհում բարեկամ երկրներ եւ ժողովուրդներ չունենք: Անգամ եթե կան բարեկամության դրսեւորումներ, ապա դրանք բխում են նրանց շահերից: Մենք չպետք է մոռանանք, որ միակողմանի սեր չի լինում, առավելապես ժողովուրդների եւ պետությունների միջեւ: Մենք պետք է մշտապես մտածենք, որ մեր սերը մենք ենք. մենք պետք է իրար սիրենք, մենք պետք է իրար գնահատենք, մենք պետք է ուս ուսի տանք, որ երկիր պահենք՝ այն սուրբ հողը, այն սուրբ ջուրը, որ Աստծո շնորհածն է մեզ, որտեղ մեր նախնիներն են ապրել, որտեղ մենք ենք ապրում, որտեղ եւ մեր ժառանգները պետք է ապրեն:

Արցախը միշտ էլ հայ ժողովրդի զարթոնքի եւ վերազարթոնքի ելակետներից մեկն էր, եթե ոչ՝ գլխավոր ելակետը: Ես հավատացած եմ, որ այս դժվարին պայմաններում անգամ դարձյալ Արցախը իր առաքելության մեջ է գտնվելու:

Արցախից է սկսվելու հայ ժողովրդի վերջնական ազատագրումը»,- ասել է Մ. Հաջյանը:

Արցախցու ոգին, բազկի ուժն ու համբերությունը ոչ մի ազգ չունի եւ չի էլ ունենա. Յ. Մարգարյան

«Լույսի խորան» հուշահամալիրում արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված միջոցառմանը իր խոսքն է հղել 44-օրյա պատերազմի մասնակից, ԱրՊՀ մարտական պատրաստության ակումբի ղեկավար Յուրա Մարգարյանը:

«Սիրելի՛ հայրենակիցներ, այսօր հիշատակի օր է, օր հերոսացման, օր խնկարկումի: 2 տարվա չսպիացող վերքի վրա նորից աղ լցնելուց հետո մենք շարունակում ենք կանգուն մնալ: Այսօր այստեղ ենք՝ խոնարհվելու 44-օրյա պատերազմում նահատակված մեր հերոս քաջորդիների սուրբ եւ անմար հիշատակի առջեւ: Նրանց շնորհիվ է, որ մենք կարողանում ենք ապրել եւ արարել մեր վիրավոր Արցախում: Նրանց սուրբ պատգամին եւ երդմանը հավատարիմ՝ մենք պետք է խոստանանք, որ արժանի հետնորդները կլինենք նրանց կիսատ գործի:

Ինչպես ասում են՝ սուգը հավերժ է, եթե չկա պայքար: Եկեք պայքարենք, ինքնակազմակերպվենք, միաբանվենք մեկ միասնական գաղափարի շուրջ, ազգովի մարտնչենք, մեր հերոսների կիսատ գործը շարունակենք պատվով, մի բռունցք դառնանք, որպեսզի պայքարը լինի իր նպատակին ծառայող:

Մենք իրավունք չունենք ընդմիշտ ապրել այս ցավով: Դժվար է, գիտեմ, իրոք՝ դժվար է:

Ես ինքս 44-օրյա պատերազմի մասնակից եմ, կորցրել եմ հարազատ քեռուս, մարտական ընկերների, բարեկամների: Այս թեւաթափ լինելը եւ կոտրվելը ինձ եւ արցախցու համար չէ: Հավատացեք եւ համոզված եղեք, որ արցախցու ոգին, բազկի ուժն ու համբերությունը ոչ մի ազգ չունի եւ չի էլ ունենա: Մենք պետք է կարողանանք մեր տղաների օրինակով գոտեպնդվել եւ պայքարել մեր լինելության համար: Մենք չընկրկող ազգ ենք, մենք դարեր ի վեր պայքարել ենք ու դեռ պայքարելու ենք:

Եկե՛ք իրապես՝ ոչ միայն խոսքով, այլ մեր գործով, պետք եղած դեպքում նաեւ արյամբ պաշտպանենք մեր հող հայրենին, ապավինենք սեփական ուժերին, որպեսզի մեր պայքարը պատվով պսակի իր պտուղները:

Խաղաղություն մեր երկրին, անփորձանք ծառայություն մեր սահմանապահ առյուծասիրտ մարտիկներին: Մենք վրեժի ցասումը սրտներիս առած՝ մեր համառ կամքի եւ միասնականության շնորհիվ կերտելու ենք նոր եւ արժանապատիվ հաղթանակներ:

Ես Արցախն եմ, մենք Արցախն ենք, Արցախն ապրելու է»-, ասել է Յ. Մարգարյանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ոգեկոչելով նահատակների հիշատակը՝ ցույց ենք տալիս, որ մեր պայքարն ավարտված չէ

4← ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում կարեւորել է նման միջոցառումների անցկացումը՝ ի հիշատակ այն լուսավոր տղաների, ովքեր 44-օրյա պատերազմում իրենց կյանքը զոհաբերեցին, որպեսզի այսօր Արցախը շարունակի շնչել, շարունակի ապրել, գուցեեւ կարողանա վերագտնել երբեմնի իր փառքը, հնարավորությունները. «44-օրյա պատերազմը, ինչպես մեր ողջ ժողովրդին, այնպես էլ մեր ուսանողությանը եւ դասախոսական կազմին հիասթափության ապրումներ բերեց՝ այն առումով, որ մենք կորցրինք մեր լավագույն տղաներին, որ Արցախի տարածքի 75 տոկոսը կորցրինք: Բայց ես չեմ կարծում, թե դա հավերժական կորուստ է, ես վստահ եմ, որ կգա ժամանակ, երբ այդ տարածքները կրկին հնարավոր կլինի վերադարձնել: Այո՛, սկզբնական շրջանում անորոշությունը, այլայլվածությունը տիրապետող էին, սակայն որոշակի աշխատանք կատարելուց հետո, համախմբումից հետո հնարավոր եղավ այդ շոկային իրավիճակից դուրս գալ, վերահմաստավորվել եւ վերագտնել մեր տրամադրություններն ապագայի հանդեպ:

Ուստի, չպետք է դադարել պայքարել, հետամուտ լինել գաղափարների, հակառակ դեպքում՝ մենք որպես ազգ կկորչենք պարզապես: Պետք է մեր ժողովրդի յուրաքանչյուր ներկայացուցիչ վստահ լինի, որ եթե կա պայքար, դիմադրություն, հավատ ապագայի նկատմամբ, ապա այդ ապագան կգա: Ապագան պետք է կերտենք եւ ոչ թե սպասենք, որ գա այնպիսին, ինչպիսին ինքն է տրամադրված»:

Խոսելով ցանկալի ապագայի կերտման գործում երիտասարդության դերի մասին՝ Վիտյա Յարամիշյանը հակված է չափազանցնելու երիտասարդության դերը, որովհետեւ ինչպիսին լինի երիտասարդությունը, այնպիսին էլ լինելու է ապագան: «Իհա՛րկե, նրանք պետք է հավատարիմ լինեն մեր ազգային ավանդույթներին եւ նույն ուղղությամբ էլ շարունակեն կերտել ապագան»,- նշել է նա:

«Արցախյան երրորդ պատերազմում նահատակված եւ անհետ կորած զինծառայողների հարազատների միություն» հասարակական կազմակերպությունը, ԱՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ, խաչերթի ժամանակ կազմել է անմահների գունդ. երիտասարդներն իրենց գլխավերեւում պահում էին 44-օրյա պատերազմի նահատակների լուսանկարները: ԱՀ ԿԳՄՍ նախարարության արտադպրոցական ծրագրերի բաժնի վարիչ Արմեն Պետրոսյանը նշում է. «Եթե նահատակներն իրենց ողջ կյանքն են նվիրել մեր հայրենիքին, մենք մեր կյանքից երկու ժամ կտրում ենք, մոռանում ենք մեր «ես»-ը, անուն-ազգանունը եւ այդ երկու ժամում կրում ենք այն մարդու անուն-ազգանունը, ում լուսանկարը կրում ենք: Ոգեկոչելով նահատակների հիշատակը՝ ցույց ենք տալիս, որ մեր պայքարն ավարտված չէ, մենք պայքարելու եւ վերականգնելու ենք վաղեմի փառքը»:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ընկերվար երիտասարդների միջազգային միության Սեւծովյան տարածաշրջանի անդամ կազմակերպությունների երեւանյան համաժողովը

Ծիծեռնակաբերդի բարձունք այցով է մեկնարկել Ընկերվար երիտասարդների միջազգային միության Սեւծովյան տարածաշրջանի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչների երեւանյան համաժողովը:

Համաժողովը հյուրընկալել է աշխարհի խոշորագույն երիտասարդական-քաղաքական այս կազմակերպության լիիրավ անդամ ՀՅԴ երիտասարդականը: Երեւան եկածներին ողջունելով՝ ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանը նշել է. «Համաժողովն անցկացվում է Հայաստանի համար ծանր ու լարված պայմաններում. ընդամենը մի քանի օր առաջ է Ադրբեջանը հարձակվել Հայաստանի ինքնիշխան տարածքի վրա»:

Համաժողովի քննարկման հիմնական թեման սեւծովյան տարածաշրջանի երկրներում մարդու իրավունքների, դրանց ոտնահարման հետ կապված իրավիճակն է: Յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ պատմել է իր պետության խնդիրներից, մտքերի փոխանակում արել լուծումներ գտնելու համար: Համաժողովին Արցախի ներկայացուցիչ, ՀՅԴ Արցախի երիտասարդական միության Կենտրոնական վարչության անդամ Վահագն Խաչատրյանը խոսել է արցախահայության հանդեպ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունից օտարերկրացի պատվիրակների մոտ իրավիճակի ավելի ճիշտ պատկեր ձեւավորելու համար:

Ստորեւ ներկայացնում ենք ՀՅԴ ԱԵՄ-ի անդամ Վ. Խաչատրյանի ելույթը:

«Հարգելի՛ ընկերներ,

ուրախ եմ, որ այսօր ներկա եմ այստեղ եւ ներկայացնում եմ մեր երկրորդ հայկական պետությունը՝ Արցախը:

Այսօր Արցախը պայքարում է իր անկախության համար, իսկ մեր ժողովուրդը պայքարում է մարդու հիմնարար իրավունքների՝ կյանքի, իր իսկ հայրենիքում ապրելու իրավունքի համար:

1988-ից հետո, երբ Խորհրդային Միությունը սկսեց փլուզվել, Արցախի ժողովուրդն ընտրեց ժողովրդավարության ուղին՝ հանրաքվե անցկացնելով եւ հռչակելով իր անկախությունը, որն էլ հանգեցրեց երեք դաժան պատերազմների՝ երկու կողմից ողբերգական կորուստներով:

Վերջին պատերազմը, որը կոչվում է քառասունչորսօրյա պատերազմ, տեղի ունեցավ 2020թ., որտեղ արցախցիները միայնակ մնացին թշնամու ագրեսիայի դեմ: Հայ ժողովուրդը չտեսավ միջազգային հանրության առարկայական աջակցությունը, ինչի արդյունքում ագրեսորը հաղթեց պատերազմում: Արցախը կորցրեց իր տարածքների յոթանասունհինգ տոկոսը, զոհվեց ավելի քան 5000 զինվոր եւ խաղաղ բնակիչ, իսկ երեսուն հազար քաղաքացիներ տեղահանվեցին եւ մնացին անօթեւան:

Իհարկե, Թուրքիան եւս այս երեք պատերազմների ընթացքում օգնեց Ադրբեջանին:

Այսօր այստեղ ներկայացնում եմ իմ հերոս ժողովրդին եւ իմ երկիրը, որը դարձել է կղզի՝ շրջապատված թշնամիներով, բայց չի շեղվել անկախության ճանապարհից՝ շարունակելով պայքարել եւ հաղթահարել բոլոր դժվարությունները:

Արցախի անկախ հանրապետության ստեղծման տարիներին ՀՅԴ Արցախի երիտասարդական միությունը սկսեց իր գործունեությունը եւ դարձավ երկրի ամենաակտիվ երիտասարդական կազմակերպություններից մեկը:

ՀՅԴ Արցախի երիտասարդական միությունն Արցախում գործում է 1992-ից եւ շուրջ 30 տարի շարունակ Արցախի երիտասարդության շրջանում տարածում է ընկերվարական եւ ժողովրդավարական գաղափարներ: Միությունը գործում է Արցախի գրեթե բոլոր շրջաններում:

ՀՅԴ Արցախի երիտասարդական միությունը մշտապես պայքարել է երկրում ի հայտ եկող սոցիալական անարդարությունների դեմ, աշխատել Արցախի միջազգային ճանաչմանը հասնելու համար, կազմակերպել հասարակական, քաղաքական, մշակութային եւ երիտասարդական միջոցառումներ եւ կյանքի կոչել բազում ծրագրեր:

2020թ. չարաբաստիկ պատերազմի ընթացքում ՀՅԴ Արցախի երիտասարդական միությունը եւս մարդկային կորուստներ է կրել: Մեր ընկերները, թողնելով իրենց երեխաներին ու ընտանիքները, գնացին սահմանները պաշտպանելու, գնացին ու չեկան այլեւս: Մեր շատ ընկերներ կորցրին իրենց տները եւ ստիպված եղան գաղթելու Հայաստան: Պատերազմի արդյունքում մենք կորցրինք մեր 2 մասնաճյուղերը Կովսականում եւ Վազգենաշենում:

Սակայն այս ցավի հետ մեկտեղ, պատերազմից հետո ՀՅԴ ԱԵՄ-ը սկսեց ավելի ուժեղանալ եւ համալրվել նոր անդամներով: Այժմ մեր ամենամեծ նպատակն է՝ կազմակերպել սոցիալական եւ կրթական միջոցառումներ եւ ծրագրեր՝ օգնելու Արցախի երիտասարդներին հարստացնել իրենց գիտելիքներն ու հմտությունները եւ հաղթահարել այսօր մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերները: Մենք օգնում ենք երիտասարդներին՝ հիմնել սեփական միկրոբիզնեսները եւ ստեղծել աշխատատեղեր:

Պատերազմի հետքերը արցախցի երեխաների մտքից մաքրելու համար մենք կազմակերպում ենք ամառային ճամբարներ, որոնք ուսումնական են, բայց նաեւ հնարավորություն են տալիս երիտասարդներին լավ ժամանակ անցկացնել եւ մոռանալ իրենց առօրյա խնդիրները՝ պատերազմն ու ագրեսիան: Մենք կարողացանք միջոցներ հայթայթել Արցախի երեխաների համար եւ Ամանորին նվերներ բաժանելով 600 երեխայի:

Որպես Արցախում ապրող երիտասարդներ՝ մենք այս դժվարին պահերին միշտ եղել ենք մեր ժողովրդի կողքին: Մենք պայքարում ենք սոցիալական արդարության, հավասարության եւ մեր ժողովրդի իրավունքների իրացման համար: Այսօր, ներկա լինելով ՍՏԿ-ի տարեկան ժողովին, ես կցանկանայի, որ դուք բարձրաձայնեք մարդու իրավունքների խախտումների, ռազմական հանցագործությունների եւ մեր ժողովրդի՝ իր ապագան որոշելու իրավունքի՝ ինքնորոշման իրավունքի մասին:

Արցախը թեկուզ վիրավոր, բայց կա, Արցախի ժողովուրդը խոցված է, բայց հույսով լցված եւ պայքարի պատրաստ՝ հանուն իր ազատության ու իրավունքների պաշտպանության: Մենք հավատում ենք, որ միջազգային հանրությունը մի օր կբացի իր աչքերն ու կընդունի նաեւ մեր ժողովրդին՝ որպես միջազգային հանրության լիիրավ անդամների:

Շնորհակալություն եմ հայտնում ուշադրության համար եւ, օգտվելով առիթից, բոլորին հրավիրում եմ Արցախ՝ տեղում ծանոթանալու եւ սեփական աչքերով տեսնելու ստեղծված աղետալի կացությունն ու համոզվելու օր առաջ հարցին լուծում տալու անհրաժեշտության մեջ»:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արցախում մեկնարկել է ՀՕՄ-ի արեւային ջրատաքացուցիչների տեղադրման ծրագիրը

Հաշվի առնելով այս տարվա մարտ ամսին Արցախում ստեղծված էներգետիկ ճգնաժամը, Ադրբեջանի կողմից պարբերաբար գազի եւ էլեկտրաէներգիայի

մատակարարման խափանումները՝ Հայ օգնության միությունն Արցախում նախաձեռնել է արեւային ջրատաքացման սարքերի տեղադրման ծրագիրը: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետուհի Լիլիթ Մարտիրոսյանը:

ՀՕՄ-ի Կենտրոնական վարչությունը ապրիլին Արցախ կատարած այցի ընթացքում Հայ Յեղափոխական Դաշնակցության Արցախի Կենտրոնական կոմիտեի աջակցությամբ համաձայնություն է ձեռք բերել Արցախի կառավարության հետ՝ համահավասար ներդրում կատարել ծրագրի իրականացման համար:

«Ծրագրի նպատակն է՝ ապահովել արցախահայության կյանքի բնականոն ընթացքը հայրենի հողի վրա:

Ծրագրի իրագործման համար 100 000 ԱՄՆ դոլար նվիրատվություն է կատարել ՀՕՄ-ի Կանադայի շրջանային վարչությունը»,- մանրամասնում է Լ. Մարտիրոսյանը:

Սկզբնական փուլում ծրագրի շահառու են հանդիսանում զոհված, հաշմանդամություն ունեցող անձանց եւ բազմազավակ ընտանիքները, որոնց ընտրության հարցում համագործակցել են ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարության հետ:

ՀՅԴ Արցախի կառույցի եւ ՀՕՄ-ի Արցախի միավորի կողմից ստեղծված աշխատանքային հանձնախմբի հետ համապատասխան աշխատանքներ են տարել համայնքների ղեկավարների հետ, տեղում ծանոթացել ընտանիքների սոցիալական խնդիրներին:

Չգազաֆիկացված համայնքներում Արցախի կառավարությունը սուբսիդավորելու է անհրաժեշտ գումարի 50%-ը, իսկ գազաֆիկացված համայնքներում ՀՕՄ-ը հոգալու է ջրատաքացուցիչների տեղադրման ողջ ծախսը:

Լ. Մարտիրոսյանի տեղեկացմամբ՝ համապատասխան պայմանագրերը կնքվել են ԱՀ կառավարության, ՀՕՄ-ի Արցախի միավորի, մատակարար «Շտիգեն» ընկերության եւ ծրագրի շահառուների միջեւ:

Ծրագրի առաջին փուլի շահառու են դարձել 98 ընտանիքներ, իսկ ծրագրի մեկնարկը տրվել է Մարտունու շրջանի Ննգի, Կաղարծի, Պառավաթումբ չգազաֆիկացված համայնքներից:

«Շտիգեն» ընկերության Արցախի ներկայացուցիչ Արմեն Խաչատրյանի խոսքով՝ արդեն ավարտել են ԱՀ Մարտունու շրջանի Կաղարծի եւ Պառավաթումբ համայնքներում նախատեսված ջրատաքացուցիչների տեղադրումը, այժմ աշխատանքներ են ընթանում Ննգի համայնքում: «Շտիգեն» ընկերության ներկայացուցիչը նշում է, որ մինչեւ տարեվերջ նախատեսված է ավարտել 100 արեւային սարքերի տեղադրումը:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հայաստան եւ Ադրբեջան

Մաս 2

Ազգային-ազատագրական պայքարի գործիչ, 1-ին Հանրապետության Ռազմական եւ Ներքին գործերի նախարար, ՀՅԴ Բյուրոյի երկարամյա անդամ Ռուբեն Տեր-Մինասյանի հոդվածը «Հայաստան եւ Ադրբեջան» վերնագրով, որը հրատարակվել է «Հայրենիք» ամսագրում 1927 թվականին եւ այժմեական է նաեւ մեր օրերում:

Միջին դարուն յաջորդական կերպով արշաւանքներ տեղի ունեցան Միջին Ասիայէն դէպի արեւմուտք. մոնղոլեան թուրք-թաթար ցեղեր խուժեցին ամէն կողմ՝ աւեր ու կործանում սփռելով: Պարսկաստանը ողողուեցաւ այդ հորդաներով, որոնց մէկ հոսանքը մտաւ Կուրի հովիտը:

Պարսկաստանի իշխանաւորները յաճախ կ'ուժեղացնէին այս հորդաները, որպէսզի մէկ կողմէ ազատեն բուն Պարսկաստանը՝ այս բարբարոսները դէպի ծայրագաւառները քշելով, եւ միւս կողմէ, հակակշռեն հայկական, վրացական ու կովկասեան լեռնականներու ուժերը, որոնցմէ ժամանակին կ'անհանգստանային պարսիկները: Այս նպատակով՝ Ղազախի, Բորչալուի եւ շատ վայրերու թաթար ցեղերը, Ղարափափախները եւնգ փոխադրուեցան Հայոց եւ Աղուանից երկիրները:

Այս աւերածութեանց եւ գաղթերուն չդիմացան Աղուանք եւ Ուտիք. հայերը վնասուեցան, բայց քաշուեցան իրենց լեռները եւ պահպանեցին իրենց ինքնութիւնը: Աղուանից եւ Ուտեաց երկիրները վերացան, ստեղծուեցան Բագու եւ Շիրվան, Շաքի եւ Գեանջա պարսից խանութիւնները: Այլեւս չկային Աղուանք եւ Ուտիք, ոչ միայն ոչնչացան իբր պետութիւն, այլ նաեւ իբր ինքնուրոյն ժողովուրդներ:

Աղուանք եւ Ուտիք կամ սպանուած էին, կամ մահմեդականութիւնը ընդունելով ձուլուած եկուորներու եւ մասամբ ալ տեղացիներու մէջ:

Այսօր Աղուանք եւ Ուտիք իբր ազգային անհատ գոյութիւն չունեն, բայց կը շարունակէ ապրիլ թաթար, թաթ, թալիշ եւ այլ ժողովուրդներու, գուցէ նաեւ ղարաբաղցի, գանձակեցի հայերու մէջ՝ իբր արիւն, իբր բնաւորութիւն:

Եթէ հնար ըլլար բնորոշել ազգերը իրենց արեան որակով, միս ու ոսկորով, չպիտի սխալուէի ըսելու, թէ այսօրուան Կուրի աջ ափը ինկած թաթարներու կէսը կամ աւելին աղուան է, քան թուրք կամ թաթար: Բայց իրականութիւնը այն է, որ ինչպէս Ղարաբաղի մէջ այսօր կան Մելիք-Ասլանովներ, Մելիք-Եկանովներ՝ հայ, եւ որ այսօրուան գիտակցութեամբ մին հայ է եւ միւսը թիւրք, այդպէս ալ ձուլուած աղուանները կը համարուին այսօր թաթար, թուրք կամ աւելի շուտ «իսլամ»:

Քանի պարսից տիրապետութիւն էր հաստատուած Աղուանքի եւ Ուտիքի վրայ, չկար դեռ եւս ազգային գիտակցութիւն: Թէ՛ մահմեդականութիւն ընդունած բնիկները, թե՛ եկուոր մոնղոլական ցեղերը ինքզինքին կը համարէին իսլամ, շիա, Իրանի մէկ մասը՝ ենթարկուած պարսկական կուլտուրային եւ ազդեցութեանը:

1827-էն եկան ռուսները: Այս անկերպարան ժողովուրդը, որ մինչ այդ իբր զէնք կը ծառայէր պարսից ձեռքը, դարձաւ զէնք Ռուսաստանի ձեռքը, հակակշռելու ազգային գիտակցութիւն ունեցող բնիկ ժողովուրդներուն՝ հայերուն, վրացիներուն եւ լեռնականներուն:

Այս նոր խմորուող ժողովուրդը ոչ հին Աղուանն էր, ոչ Ուտիք, ոչ Իրանի պարսիկը, ոչ ալ թուրք կամ թաթար: Անգոյն տարր մըն էր. նոյնիսկ իր «իսլամ» անունը խոր իմաստ մը չունէր, անոնց մէջ տակաւին չկար Շամիլներու կրոնական ուժը, որով բազմալեզու Տաղստանը ամենէն նպաստաւոր տարրը կը համարուէր ռուս աշխարահակալութեան աչքին Անդրկովկասի մէջ:

Ռուս աշխարհակալութիւնը օգտագործեց այս տարրը ազատատենչ ազգերու երակները հանգցնելու համար եւ իբր վճար այդ ծառայութեան՝ Ադրբեջանի այս զանգուածը դրաւ հողային ու տնտեսական ամենապաստաւոր կացութեան մէջ: Ցիցիանովներու, Գալիցիններու, Վորոնցովներու եւ ներկայ կոմունիստներու վարքագծին մէջ մեծ բաժին ունի այս պարագան: Եւ կացութիւնը փոխուած էր Հայաստանի հիւսիսային կողմը, նոր դրութիւն էր ստեղծուած մեր թիկունքին:

Աղուաններուն եւ Ուտեաց յաջորդող զանգուածները այլեւս չունէին իրենց ազգային ձգտումը՝ հասնելու իրենց ազատութեանգ այդ զանգուածը կը ձգտէր յենուիլ կամ պարսից կամ ռուսաց ուժին վրայ՝ ոչ թէ իր անկախութիւն ձեռք բերելու, այլ հայոց, վրաց եւ լեռնականներու ազատագրութեանց հակազդելու, եւ ունէր մէկ բնազդ՝ ընչաքաղցութիւն, ուրիշի հաշուին ապրելու ձգտում:

Եւ այս զանգուածը դարձաւ ոչ միայն հին Աղուանից, Ուտեաց, այլ ամբողջ արեւելեան Հայաստանի կալուածատէրը, բէկը, աղան, խանը. ան նստաւ դաշտի վրայ՝ առանց կարենալ օգտագործելու, եւ ձեռքը դրաւ հայկական լեռներու վրայ՝ իբր սեփականութիւն: Աղուանք եւ Ուտիք, հրաժարելով իրենց ազգութիւններէն եկուորներու առջեւ, ապրեցան իբր իսլամ. հայերն ալ հարկադրուեցան հրաժարիլ իրենց լեռներէն, գիւղերէն, դաշտերէն, արտերէն եւ արօտներէն՝ չմեռնելու համար: Հայը մնաց հայ, բայց անհող, եւ դարձաւ մշակ եկուոր տարրերուն:

Այս դրութիւնները ոչ քաղաքական եւ ոչ ալ տնտեսական տեսակէտներէ չէին նոյնանար, եւ հետեւաբար հայերու ու նոր հարեւաններու ճամփաները տարբեր պիտի ըլլային, իրարու թշնամի կամ «բարեկամ», եթէ երբեք բարեկամութիւն հնարաւոր է ստրուկի եւ տիրոջ միջեւ:

Ահա գլխաւոր գծերով այն հիմնական պատճառը, որ Աղուանից եւ Ուտեաց տներու անկումէն ետք մենք յենարան ու բարեկամ չենք ունեցած մեր հիւսիսի կողմէն:

* * *

Քիչ մը տարբեր է ներկայ վիճակը. Ռուսաստանի փլուզումէն, յեղափոխութենէն յետոյ նոր դրութիւն է ստեղծուած մեր հիւսիսի կողմը: Յարութիւն չեն առած Աղուանք եւ Ուտիք, բայց ստեղծուած է նոր ազգութիւն մը՝ Ադրբեջան անունով: Արդէն ըսի, որ նման ազգ եւ ժողովուրդ չկայ, եւ եթէ այսօր կայ՝ շնորհիւ բուռ մը թուրք մտաւորականներու է ստեղծուած:

Ներկայ Ադրբեջանի մէջ կան իսլամներ շիա եւ սիւնի աղանդներով, եւ անոնց ազգային գիտակցութիւնը կը սահմանափակուի կրոնական այդ շրջանագծին մէջ:

Այս իսլամ զանգուածը կազմուած է հետեւեալ կերպով - Լէնքօրան շրջանի մէջ թալիշներ, Բագուի շուրջը մինչեւ Ղուբայի մօտերը՝ թաթեր., Ղուբայի եւ Շէմախի մէկ մասը կիւրինցիք, գարտնեցիք, խինալուկներ, ջէկեր, կռիզներ, գաբիդուլներ, եւ Նուխիի եւ Զաքաթալայի շրջանները՝ աւառներ, ուտեցիք, ինգիլօյցիք, Գանձակի դաշտային մասերուն մէջ Աղուան իսլամներ, իսկ լեռնային Գանձակի, Ղարաբաղի, Բազար Գէչարի, քիւրդ կռայի իսլամներն կամ քրդեր են, կամ մահմեդական հայեր, կան նաեւ մոնղոլներ, թուրքեր, թաթարներ, որոնք եղած են իսկական ուժը՝ միւսները հպատակեցնող եւ իսլամացնող: Իսկ շաղախը, որ միացած էր իսլամ անուան տակ, կրթութեան եւ ազգային շարժումներու ազդեցութեանց տակ սկսեր էր անգոյն վիճակէ դուրս գալ եւ կարիքը զգալ իր ազգային բնութագիծը ունենալու:

Պարսիկները քնացած մնացին, զբաղուած իրենց «շախսէ վախսէեով», զարկ չտուին ազգային ինքնագիտակցութեան, անոնք հեռու մղեցին թալիշն ու թաթը, որ իրենց հարազատ ցեղակիցներն են: Լեռնականները դեռեւս ազգային գիտակցութիւն չունին, ինգէլօյցին, աւառը, կռիզը, կիւրինցին, գարտնէցին եւ մյուսները ունին իրենց սեփական լեզուները, բայց թիւրիմացաբար ինքզինքնին մօտ կը զգան իսլամ եղբայրներուն:

Հայերը չափազանց շատ սահմանափակուեցան Առաքելական եկեղեցւոյ պատերուն մէջ, նոյնիսկ Դաշնակցութիւնը չազատագրուեցաւ դաւանական կաշկանդումներէ, հարկ եղած չափով չաշխատեցաւ քանդելու դաւանական կաշկանդումները, ինչպէս քանդեցինք կաթոլիկ, լուսաւորչական եւ բողոքական անջրպետները: Եթէ այս վերջին տասնեակ տարիներուն ճանչնայինք մահմետական հայ բազմութիւնները, գուցէ ունենայինք այնքան յենարան Ադրբեջանի մէջ, որքան վրացիք ունին Աջարիստանի եւ Լազիստանի մէջ:

Այս անտէրութեան մէջ, ի պատիւ թուրքերու, պէտք է ըսել, որ անոնք ժրաջան աշխատանք կատարեցին,.նախ Ադրբեջանի իսլամին ներշնչեցին, թէ ինք թաթար է, յետոյ ըսին, թէ ադրբեջանցի է, այժմ ալ կը հասունցնեն, թէ ադրբեջանցի թուրք է, վաղն ալ պիտի կրճատեն ադրբեջանցին եւ պիտի թողուն թուրքն ու Թուրքիան:

Մեր հարեւաններու այս կերպարանաւորումը հետաքրքրական է, որովհետեւ ատկէ է կախուած եւ ատով զուգահեռ կ'ընթանայ մեր հիւսիսի դրացիին քաղաքական օրիենտացիան:

* * *

Ո՞րն է ուղին մեր ներկայ հարեւան Ադրբեջանի եւ ինչո՞ւ կը ձգտի ան:

Ասիկա որոշելու համար նախ պէտք է աչքի առջեւ ունենալ հիմնական երեւոյթ մը: Բոլոր դեռ չկազմակերպուած, անպատմութիւն ազգերը, որոնց անհատականութիւն լաւ չէ շեշտուած, կ'որոնեն ու կը գտնեն ուժեղ յենարան մը եւ կը դառնան անոր հաւատարիմ գործիքը: Անոնք միշտ ալ կ'ըլլան ուժեղի կողմը, յաճախ իրենց սեփական շահերն իսկ զոհելով:

Այսպէս է եղեր Ադրբեջանի ժողովուրդը պարսից տիրապետութեան ժամանակ, այսպէս էր նաեւ ռուսաց ցարերու ժամանակ: Երբ ռուսական ուժը սկսաւ նուազիլ եւ Տաճկաստանի աստղը սկսաւ փայլիլ, ան հակուեցաւ թուրքին կողմը եւ 1917-էն ասդին դարձաւ անոր առաջապահն ու գործակիցը: Ապացուցանելու համար իր հաւատարմութիւնը եւ նոյնիսկ նոյնութիւնը թուրքին հետ՝ ան չվարանեցաւ հարուածելու հայերն ու ջարդելու ռուսները, Շամխոր, Գանձակ, Ջիբրայիլ եւ ամենուրեք, ուր իր ձեռքը կը հասնէր:

Շատեր այդ ոճրապարտ քայլերը կը բացատրեն ազգային գիտակցութեան զարթօնքով, կամ ատելութեամբ ռուս տիրապետութեան դէմ, կամ իբր ադրբեջանցի անկախութեան ձգտումի հետեւանք:

Այս բացատրութիւնները մասամբ ճիշտ են մասնակի խմբակցութեանց եւ անձերու վերաբերմամբ, բայց զանգուածօրէն այդ արիւնահեղութիւնները հետեւանք էին ուժեղ Թուրքիային ծառայելու դիտումին:

Ադրբեջանցին այժմ ալ բնազդօրէն կը փորձէր ըլլալ թուրքին հետ, փչել անոր զուռնան, առանց հետաքրքրուելու, թէ այդ քայլէն ինք անձնապէս ի՞նչ պիտի շահէր: Այս ի՛նչը հասկանալի էր լոկ մտաւորականներուն՝ Սուլթանովներուն, որոնք Ադրբեջանը կ'ուզէին վերածել թրքական վիլայէթի, իսկ զանգուածը, ըստ էութեան, կը շարունակէր մնալ նախկին հողի վրայ, այսինքն՝ օգնել ուժեղին, խփել ինկածին:

Ադրբեջանի զանգուածին վերագրել, թէ ան կ'ուզէ իր սեփական անկախութիւնը ունենալ, սխալ պիտի ըլլար: Ան դեռ եւս չունի ոչ ազգային հօմօժէնութիւն, ոչ գիտակցութիւն, ոչ ալ աւանդութիւն: Ան դեռ եւս կրօնական համայնք մըն է՝ բնազդով հակուած դէպի ուժեղը: Եւ այս պարագան պարարտ հող կը ներկայացնէ, որ թուրք ու թաթար մտաւորականները իրենց ետեւէն քարշ տան զանգուածները դէպի պանթուրանիզմ, դէպի իսլամ Թուրքիա, դէպի ուժեղ Թուրքիա:

Եւ Թուրքիա ուժեղ կ'երեւայ ադրբեջանեան զանգուածին աչքին այն բարբարոսութիւններով, զորս գործադրած է հայոց եւ այլ ժողովուրդներու վրայ եւ այն երեւութական արհամարհանքով, զոր թուրքերը ցոյց կուտան ամբողջ աշխարհի հանդէպ:

Այս անձեւ զանգուածին աչքին Թուրքիան դարձած է մարմնացումը ուժի, բռնութեան, եւ ըլլալով անոր կրօնակիցը, անոր լեզուակիցը՝ ադրբեջանցին դարձած է թուրքին կողմնակիցը, անոր գործիքը: Այս հանգամանքով ալ կ'որոշուի այժմ այս զանգուածին ուղղութիւնը կամ նպատակը:

Մէկ խօսքով՝ ադրբեջանցիին այսօրուան նշանաբանն է՝ ըլլալ թուրքին հետ, նոյնանալ թուրքին հետ, ծառայել անոր՝ ստեղծելու մեծ Թուրքիա առաջաւոր եւ միջին Ասիոյ շրջաններուն մէջ:

Այսօր «ադրբեջանցի ազգ» ասութիւնը դատարկ խօսք է՝ քօղարկելու թրքական ձգտումները: «Ադրբեջան երկիր» անունը պատրուակ է՝ ծածկելու արեւելեան Թուրքիա կազմելու ձգտումը: Այս երկրի նպատակը չէ Ռուսիան հեռացնել՝ իր եւ Անդրկովկասի անկախութիւնը ձեռք բերելու համար, այլ Ռուսիան հեռացնել՝ իր եւ անդրկովկասեան ժողովուրդներու ազատութեան տենչերը թաղելու եւ Թուրքիան հաստատելու մինչեւ մեծ Կովկաս: Անոր նպատակը չէ իր բնագաւառի տնտեսութիւնը, քաղաքակրթութիւնը բարձրացնել, այլ եղածն ալ ոչնչացնել եւ ետ երթալ: Անոր նպատակը չէ տեղական ժողովուրդներու հետ համակենակցութիւն, ներդաշնակութիւն ստեղծել, որովհետեւ այդ պարագային չպիտի կրնար ծառայել պանթուրանիզմին, որու առաջին եւ վերջին նպատակն է բնաջնջումը իր առջեւ գտնուող ինքնագիտակից ժողովուրդներու:

Այսօր դժբախտաբար մեր հիւսիսի կողմը, մեր մէջքին վրայ այս ցաւը, այս պալարն է գոյացած մեր միս ու արիւնէն: Մենք պարտաւոր ենք մեր աչքերը փակ չպահել եւ հաշուի առնել ստեղծուած նոր դրութիւնը, պարտաւոր ենք գիտակցել իմաստին դեռ 1904-1905 թուականներուն Ադրբեջանի եւ Թուրքիոյ իտէօլօգ Աղայեւի հետեւեալ խօսքերուն. «Հայերդ շատ առաջ մի՛ վազէք, դուք պիտի զուգահեռ կամ ետեւէն գնաք Ադրբեջանի զանգուածներուն, հակառակ պարագային մենք պիտի դառնանք ջաղացի քար մը ձեր վզին կախուած, պիտի խորասուզուիք, եթէ չենթարկուիք»:

Աղայեւի այս միտքերը անիմաստ խրատներ չեն, անտեղի սպառնալիքներ չեն: Ադրբեջանի գորշ զանգուածը այսօր խոչընդոտ է Հայաստանի առաջադիմութեան, պատճառ է մեր անկախութեան, ազատութեան անկման» ան պատճառ եղաւ եւ է մեր երկրի թուլացման եւ մեր ժողովրդի քայքայման: Իրօք որ ան ջաղացքի քար է Հայաստանի եւ Անդրկովկասի վզէն կախուած: Ադրբեջանի այս բացասական արժէքը հասկցած են թուրքերն ու ռուսները, եւ ըստ այնմ կը գործածեն զայն Անդրկովկասի ու Պարսկաստանի դէմ:

/Շարունակելի/

Համշեն. հայկական դրախտը

Ես հայ եմ: Հայ՝ ինքնամոռաց սիրահարված այն ամենին, ինչը հայկական է: Այն ամենը, որտեղ կա հայկական հետք, հայի ձեռագիր՝ իմ տարերքն է: Ես սիրում եմ հայկական յուրաքանչյուր քար ու թուփ:

Տարիներ առաջ, երբ առաջին անգամ ոտք դրեցի Անի, տարօրինակ զգացողություն էր, ես ինձ տանն էի զգում, տանտեր էի զգում. խելագարվե՞լ էի: Ո՛չ, իհարկե. իսկապես տանն էի՝ թեկուզ ավերված, թեկուզ կիսաքանդ, բայց տանն էի: Այսօրվա պես հիշում եմ՝ ինչպես էի դողացող ձեռքերով արագ-արագ փորձում զանգել հնարավոր յուրաքանչյուրին՝ ասելու՝ գիտե՞ս հիմա որտեղ եմ, տուն եմ եկել (իմիջիայլոց, Հայաստանի ցանցից էի օգտվում. Ախուրյան գետի մյուս կողմում Գյումրին էր):

Հազար տարվա կարոտ ուներ իմ երազը հազարաթեւ,

Ա՛խ, թեկուզ լուռ, դեռ ավերակ, տեսնել Անին՝ ու նոր մեռնել...

Տեսա Անին ու... չմեռա...

Եվ հենց այդ օրն ուխտեցի հետագա ճամփորդական պատմությանս փազլը հավաքել հայկական բնակավայրերից բերված պատառիկներով, բոլոր այն վայրերով, որտեղ կան հայի արմատներ:

Այս անգամ քայլերս ուղղվեցին դեպի ՀԱՄՇԵՆ - Համամշեն:

Համշենը Սեւ ծովի հարավարեւելյան ափին գտնվող հայկական կիսանկախ իշխանություն էր VIII դարի վերջից մինչեւ XX դարի սկիզբ՝ բնակեցված հայերով: XVIII դարի վերջին-XIX դարի սկզբին ծավալվել է Համշենի հայերի բռնի մահմեդականացումը: Դավանափոխ հայերին անվանում էին «կեսկեսներ»: Այժմ Համշենում ապրում են մոտավոր 10000-30000 հայախոս համշենցիներ (ըստ տարբեր հաշվարկների): Հնում

Համշենում ավանդույթ կար հայկական անունների վերջում դնելու օղլի մասնիկը, օր.՝ Մինասօղլի: Իսկ այժմ տարածված է թուրքական անվան եւ հայկական ազգանվան զուգակցումը, օր.՝ Մուստաֆա Ավետիք (հենց այդ անունով համշենցու ռեստորանում էլ պատիվ ունեցանք հյուրընկալվելու եւ վայելելու համշենական խոհանոցի այցեքարտը՝ մուխլաման):

Մուխլամայի նկար

Համշենը բնության մեծագույն հրաշալիքներից է: Համշենն ու շրջակայքը հարուստ են բազմաթիվ պատմական կոթողներով՝ միջնադարյան բերդերով, հրաշալի եկեղեցիներով, տարբերվող կամուրջներով: Եվ այդ ամենն ուղեկցվում է հայկական կենդանի ու հարուստ ներկայությամբ:

Եռօրյա ուղեւորությունս բացառիկ հնարավորություն էր ոչ միայն վայելելու հեքիաթային բնությունն ու բացահայտելու տեղի յուրահատուկ պատմությունը, այլեւ շփվելու համշենահայերի հետ, ծանոթանալու նրանց ավանդույթներին ու կենցաղին, հրաշալի տարազներին ու երգերին:

Օր 1: Ճանապարհվեցինք օգոստոսի 26-ի գիշերը՝ ժ. 4:00-ին:

Անցնելով Բավրայի անցակետով եւ Ջավախքով՝ մուտք գործեցինք լեռնային Արդահան (առանձնակի ոգեւորությամբ երկար կարելի է խոսել թուրք-վրացական սահմանին ծվարած հայկական Կարծախ գյուղի խանութպանի ջերմ ընդունելության մասին. բոլորին հյուրասիրում էր անխտիր՝ առանց գումարի, հորդորում ազատ ու անկաշկանդ զգալ):

Մեր խմբի առաջին կանգառը եղավ Արդահան քաղաքում, որտեղ պահպանվել է հնամենի բերդը, իսկ քաղաքի միջով անցնում է Կուր (Քուռ) գետը: Հաղթահարելով Արսյան լեռները՝ մուտք գործեցինք անտառաշատ Շավշատի գավառ: Գեղատեսիլ Շավշատում տեսանք տեղի հայտնի բերդը՝ կառուցված Բագրատունիների կողմից, ինչպես եւ բերդի ամենաբարձր կետից կարողացանք վայելել շրջակայքի հրաշագեղ բնությունը: Այնուհետեւ ուղեւորվեցինք Բագրատունիների կառուցած վեհաշուք տաճարներից Տբեթը, որից հետո ճամփա բռնեցինք դեպի Շավշատի հրաշալիքներից Սեւ լիճը, որը չի կարող անտարբեր թողնել ոչ ոքի: Մեր ճանապարհը շարունակվեց դեպի Արդվին: Ճանապարհին տեսանք Հայոց լեռնաշխարհի չորս կարեւորագույն գետերից Ճորոխը, բարձրադիր Արդվին քաղաքը, ապա Բորչկա գավառակի միջով հասանք Սեւ ծովի ափ, որտեղ էլ գեղատեսիլ, մասամբ հայախոս Խոպա (Հոպա) քաղաքն էր: Խոպա քաղաքում մեր հյուրանոցը Սեւ ծովի ափին էր: Բայց ուշագրավն ամենեւին մեր՝ Սեւ ծովի ափին լինելը չէր, այլ այն, որ հյուրանոցի կողքին գտնվող խանութի տերը համշենցի էր: Այդ մասին իմանալուն պես՝ առանց շունչ քաշելու վազում էի խանութ՝ տեսնելու, լսելու, խոսելու նրանց հետ:

- Բարեւ Ձեզ:

- Բարեւ Ձեզ: Ուրդեղե՞ն ես եկել:

- Արցախից եմ, արցախցի եմ, - պատասխանում եմ լայն ժպիտը դեմքիս (ինչպես լինում է սովորաբար Արցախ անունն արտաբերելիս): Ինչքա՜ն հաճելի էր թշնամի երկրում «բարեւ ձեզ»-իդ «բարեւ ձեզ» պատասխանը լսել: Խոսում էի, խոսում՝ մոռացած լռելու մասին: Երբ ցավի մեջ թաքնված բառերս ավարտվեցին ու չգիտեի՝ ուրիշ էլ ինչից խոսել, ինչ հարցնել (անկուշտի պես անընդհատ ուզում էի լսել համշենահայերի լեզուն, թեկուզ իրենք իրենց ոչ թե համշենահայ են անվանում, այլ համշենցի), սկսեցի գնումներ կատարել, վերցնում էի այն ամենը, ինչն աչքիս առաջ էր, ու հարցնում էի՝ որն ինչ բաղադրություն ունի, ինչքան պիտանելիության ժամկետ ունի (ոչ գովելի է, բայց երբեւիցե խանութում նման բաների ուշադրություն դարձրած չկամ): Սիրտս ու ականջներս համշենահայերեն խոսք էին տենչում լսել: Դուրս եկա խանութից՝ հաջորդ օրը վերադառնալու խոստումով ու հույսով:

Օր 2: Առավոտյան Սեւ ծովի համայնապատկերով նախաճաշից հետո ուղեւորվեցինք՝ բացահայտելու Համշեն աշխարհի հրաշալիքները, տեսնելու Քաջքարի հպարտ լեռները: Նախ այցելեցինք սաղարթախիտ անտառներում թաքնված Մանջունայի հրաշագեղ եւ տպավորիչ ջրվեժ, այնուհետեւ մուտք գործեցինք Ֆուրթունա գետի կիրճ, որն ապահովեց անմոռաց տպավորությունների նոր չափաբաժին: Տեսանք համշենյան հրաշալի կամուրջները, բարձրացանք թավ անտառներում, ժայռերի վրա վեր խոյացող ամրակուռ Զիլ ամրոցը, որն աշխարհի ամենատպավորիչ բերդերից է (անվանումը ստուգաբանվում է թուրքերեն «զիլ»՝ զանգ, ղողանջ եւ «քալե»՝ դղյակ, ամրոց բառերով): Քիչ հեռվում մեզ սպասում էր Բալահովտի շառաչուն ջրվեժը, որն առանձնանում էր իր հզորությամբ. ձայնը լսելի էր բավական հեռվից: Բալահովտի ջրվեժից հետո այցելեցինք Այդերի հայտնի յայլան (բնակատեղին), որը զբոսաշրջային կենտրոն է՝ իր գեղատեսիլ անտառներով, գահավիժող ջրվեժներով, յուրահատուկ ճարտարապետությամբ, համշենյան տարազներով, տեղանքին բնորոշ հետաքրքիր երաժշտությամբ, եւ, իհարկե, պատմական կամուրջներով, որոնք կառուցվել են արագահոս Ֆուրթունա գետի վրա:

Այստեղ մենք համտեսեցինք համշենյան կերակրատեսակները, ինչպես եւ Համշենի սրտում վայելեցինք համշենյան հանրաճանաչ թեյը: Այդերն ու նրա շուրջ տարածվող 4000 մետր բարձրությամբ Քաջքարի լեռները վայելելուց հետո վերադարձանք Սեւ ծովի ափի մեր հյուրանոցը:

Ու ես կատարեցի իմ խոստումը: Վազեցի խանութ: Ինձ դիմավորեց կապուտաչյա գեղեցկադեմ մի երիտասարդ, որն, ի զարմանս ինձ, երեկվա իմ զրուցակից խանութպան-պապիկի որդին էր: Նա, ցավոք, չէր խոսում հայերեն: Համշենցիները գիր չունեն, դարերի խորքից եկած լեզուն պահպանվում է բանավոր խոսքի միջոցով: Խանութպանի որդու՝ հայերեն չխոսելը եւ վերջինիս՝ ինձ թուրքերենով որեւէ բան հասկացնելու փորձերը հոգիս թախիծով էին համակել: Լուռ էի: Չգիտեի ինչ ասել: Որպեսզի անց հոգուս տխրությունը փոքր-ինչ ցրեց հեռվից լսվող անուշիկ աղջկա սահուն խոսքը: Հա-յե-րեն: Պատկերացնո՞ւմ եք, այնքան վարժ էր խոսում, այնքան հաճելի, նույնիսկ քիչ-միչ ռուսերեն էր խոսում (Հոպա քաղաքում շատ են լինում զբոսաշրջիկներ):

Հրաժեշտ տվեցինք իրար՝ միմյանց բարին մաղթելով:

Համշենում ապրողները մահմեդականացած հայեր են: Երբ նրանց հարցնում ես՝ համշենահա՞յ ես, պատասխանում են՝ ոչ, - թո՞ւրք ես, -ո՛չ, համշենցի եմ:

Ասում են՝ համշենական մշակույթի հիմնական կրողն ու փոխանցողը կանայք են: Մահմեդականացած համշենցիների մշակույթում պահպանված կան հայկական, քրիստոնեական հին ավանդույթներ, օր.՝ խմորի վրա խաչ անելը: Համշենցիների նյութական մշակույթը, հիմնականում պահպանելով հայկական տարրերը, մասամբ կրել է լազականի ազդեցությունը, որը որոշակիորեն զգալի է տարազի մեջ:

Տարազով նկար

Օր 3: Խոպա քաղաքից դուրս գալով՝ անցանք Բորչկա գավառակով եւ տեսանք Ճորոխի հովիտը բարձունքից: Տեսանք մարդու եւ բնության ստեղծած հրաշալի գեղեցկությունը՝ Ճորոխի ջրամբարները: Հիանալի բնապատկերներից հետո այցելեցինք Բագրատունիների կառուցած եւս մեկ միջնադարյան եկեղեցի՝ Դոլիսխանան, որը բարձր ու հիանալի տեղադրությամբ տպավորիչ կառույց է, ընդ որում՝ բավական լավ պահպանված: Այնուհետեւ ճամփա բռնեցինք դեպի պատմական Արտանուջ, որը Հայոց պատմության ընթացքում կարեւոր նշանակությամբ վայրերից է: Արդանուջում քայլարշավով գնացինք դեպի Դժոխքի ձորը (Ջեհենեմ դերեի)՝ բնության կերտած հրաշալիքը, որը համապատասխանում է իր անվանը: Դրախտային տեղադրությամբ ու դժոխային անցյալով բնության այս գլուխգործոցն իսկական դժոխք էր բազմահազար հայերի համար: Այն, ինչ լսեցինք դժոխքի ձորում,

Դանթեի «Աստվածային կատակերգություն»-ից էր:

Ջեհենեմ դերեիի սարսափները շատ համշենցիներ տեսել են իրենց աչքերով: Տեսել են, թե ինչպես էին թուրք ժանդարմները (ոստիկաններին այդպես են անվանում Թուրքիայում) ձորը նետում հայ մանուկներին հղի մոր աչքի առաջ, ինչպես էին Արդվինի եւ Արտանուջի գեղեցիկ հայուհիներին հերթով նետում ձորը:

Դժոխքի ձորից հետո մեր հաջորդ կանգառը Երեւանն էր:

Հեղինար ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

**Խմբագիր
Ա. Պուլուզյան**